



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3987

ՄՐԲԱԶԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ԻՆ ԵՒ ՆՈՐ ՈՒԽՏԻ  
ԵՆԵՂԵՑԻՈՅ

Հ ա մ ա օ ա ի ա ց

Ս. Ա. Ք. ՄԱՆԳԻՆԵԱՆՅ

Օրհանգիստի և օրհնոցի սուտուհարանների  
կազմակերպիչ

Ի ՎԱԿԱՐՇԱՊՈՍ

և ՅՊԱԿԱՆԻ ՄՐԵՑ ԿԱՌԱՐԻ ԷԿՄԱՍԻՆ:

Ո՛ՅԻՆ—1871

22  
5-25

10006

22  
5-35  
w

15 NOV 2011

ՍՐԲԱԶԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻԻՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՈՒԽՏԻ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հ ա մ ա ո տ ե ա ղ

Ս . Ա . Բ . ՄԱՆԴԻՆԵԱՆՑ

Ծխական և օրհորհայ ուսումնասիրաների  
համայն:

№ 20.

Ի ՎԱԴԱՐՀԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ:

ՌՅԻՆ—1871

24 JUN 2013

3987

№

ՄԱՏԵՆԱԳՐԱՆ

29

БИБЛИОТЕКА  
Никиты Осиповича  
№ ЭМИНА. 292.

ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ.

СИБИРСКИЙ ЦЕНТР

Տ. Տ. ԳԵՈՐԳԵԱՅ Գ.

ՎԵՀ, ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԼԹՈՂԻԿՈՒԹ  
ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

11325



5194  
38

22  
Մ-25

Ս. ՊԱՏՄՈՒԹԻԻՆ

1911 թվական

ՀԻՆ ՈՒՒՏԻ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԵՄԱՆԻՑ ՄԻՆՁԵՒ ԳՐԻՍՏՈՒԹ  
ԾՆՈՒՆԴԸ ԱՄԲ 3199:

§ 1. Աշխարհի պրեզիդենտություններ:

Եւ քրիստոնեաց եւ՛ և պաշտում եւ՛  
ճշմարիտ Աստուածը, ինչպէս իմ Արարիչ.  
Նա ստեղծեց երկինքը ու երկիրը ոչնչեց  
մէկ և ամենազօր խօսքով, և տուաւ շե-  
նութիւն վեց օրումը:

Առաջին օրը ստեղծեց լոյսը, և սկսաւ  
գիշերն ու ցերեկը:

Երկրորդ օրը շինեց հաստատութիւնը  
կամ ջրային կամարը, և կոչեց երկինք:

Երրորդ օրը բաժանեց ջուրը ցամաքից, և գետնի երեսը ծածկուեցաւ զանազան պաղատու և անպտուղ ծառերով, բանջարեղէնով, ծաղիկներով և խոտով. իսկ ջրերից կազմուեցան ծովեր, լճեր, գետեր և աղբիւրներ:

Չորրորդ օրը ստեղծեց արեգակը, լուսինը և աստղերը:

Հինգերորդ օրը Աստուած լցրեց ջրերը ձկներով և օդը թռչուններով:

Վեցերորդ օրը ստեղծեց ցամաքային կենդանիքը, և ամենքից յետոյ մարդը:

Եւ շատ լաւ եմ հասկանում, որ Աստուած ոչինչ բանի կարօտ չէ, և այն վեց օրուայ մէջ ինչ որ ստեղծեց՝ բոլորն մեզ համար է, որ ճանաչենք նորանցմով Աստուծոյ մեծութիւնը, փառքը և բարերարութիւնը, պաշտենք և երկիրպագանենք նրան, փառաւորենք զնա: Եւ ամենայն օր ամենայն դորձ սկսելիս երեաս խաչակնքում եմ, խնդրում եմ որ ինձ շնորհք տայ, և

իմ ամենայն բարի գործերուն օգնական լինի, և միշտ խոնարհ շնորհակալութիւնս մատուցանում եմ աներով՝ Փառք Քեզ Աստուած, փառք Քեզ՝ Քո ինձ ողորմութեան համար:

## § 2, Մարդ — «Եղծելը»:

Որովհետև վեց օրուայ մէջ ստեղծուածները անշունչ և անբան էին, և նոքա չէին կարող ճանաչել ոչ Աստուած և ոչ նորա փառքը, ուստի ստեղծում է բանական արարած — մարդ: Առնում է աստուածային ձեռով հող, և շինում է մարդու մարմինը, և տալիս է նրան բանական հոգի, ազատ և անմահ: Մարդն ստեղծվում է աստուածային պատկերի և նմանութեան: Աստուածային պատկերը այն է, որ Աստուած կարգում է զնա իւր փոխանակ տէր և իշխան բոլոր արարածներու վերայ, իսկ նմանութիւնը՝ էր մարդու

կեանքի սրբութիւնը, արդարութիւնը և անմեղութիւնը:

Եթէ որ ուղղում ենք, որ աստուածա-  
յին պատկերը ու նմանութիւնը ունենալ,  
պիտի աշխատենք սուրբ և մաքուր պահել  
մեր անձը, և մեր կամքը չկատարել, այլ  
Աստուծոյ կամքը:

Առաջին մարդու անունն էր Ադամ:  
Նա մէնակ էր. Աստուած նորա վերայ մէկ  
խորը քուն ձգեց, և քնած ժամանակ ա-  
ռաւ նորա կողքի ոսկորներից մէկը, և այն  
ոսկորից ստեղծեց կին, անունը դրաւ  
Եւայ, ու տուաւ Ադամին օգնական, և  
օրհնեց, որ աճին ու բազմանան երկրի  
վերայ:

§ 3, Առաջին եկեղեցին դրախտում, և նա-  
խասրէղծներու երջանիկ վեճակը:

Աստուած տալիս է Ադամին ու Եւային  
բնակութեան տեղ, մէկ զուարճալի պար-

տեղ, զոր ինքը անկել էր, և կոչուում է  
Դրախտ, որ գտանուում էր այն տեղ, ուր  
Տիգրիս և Եփրատ գետերը բղխում են:  
Սոքա են Հայաստանում Արդուամի (Աար-  
նոյ) մօտ: Այն տեղ հաստատում է առաջին  
Ե կեղեցին, որք անդամներն էին երկու հոգի  
— այր և կին: Նոցա կերակուրն էր դրախ-  
տի ծառերի պտուղները. բայց երկու զլսա-  
ւոր ծառեր կային, մէկի անունն էր Կենաց  
Ժառ, որի պտուղը ուտելով պիտի մնային  
անմահ, և միւսն էր նոցա հնազանդութիւ-  
նը և սէրը առ Աստուած փորձելու համար,  
որի անունն էր Ժառ Գիտելու Բայրն ու-  
շաղղ: Աստուած զգուշացրեց որ այս ծառի  
պտուղը չուտեն, եթէ որ կուտեն, կը մեռ-  
նին:

Ադամ ու Եւայ իրանց կեանքի առա-  
ջին օրերը անցուցանում էին շատ երջա-  
նիկ, բանի որ հնազանդ էին Աստուծոյ  
հրամանին, նոքա խօսում էին Աստուծոյ  
և հրեշտակներու հետ. ոչինչ բանի հա-

մար հոգս չունէին. դրախտի մէջ աշխատանք էր զուարճութիւն, կերակուրը պատրաստ, որ չքաղցին, ըմպելին՝ որ չճարաւին. անմեղութիւնն էր նոցա հազուատը, օդը պարզ և մաքուր՝ ոչինչ չէր վնասում նրանց. կենաց ծառի պտուղը պահում էր զնոսա առոյգ և երիտասարդական հասակի մէջ, և զազաններից ոչինչ երկիւղ չունէին. բայց երբ Աստուծոյ հրամանը կտրեցին, այս ամենայն լաւութիւններից զրկուեցան:

§ 4, Ապիստոսեղծներու պատուիրանազան-  
ցութիւնք:

Սախաստեղծները չհասկացան, թէ այն երջանկութիւնը, զոր նոքա ունէին, աշխարհի վերայ չունէր ոչ մի արարած. չբմտածեցին թէ Աստուած աւելի լաւ գիտէր նոցա օգուտը և վնասը, որ տուել էր այն պատուիրանը. նոքա հետեւեցան ի-

րանց կամքին, և աւելի լսեցին օձակերպ թշնամուն և խօսքին, քան թէ Աստուծոյ հրամանին. թեթեամիտ կինը կարծեց օձի խօսքով Աստուած դառնալ, եթէ ուտէ արդելեալ պտուղը. կերաւ, և տեսաւ զինքըն խայտառակ: Ադամ նոյնպէս կերաւ խաբուելով կնոջ սերից, ու ռախ տակ արււին Աստուծոյ հրամանը, և քանդուեցաւ Ակեղեցին դրախտումը:

Նոքա շուտ զգում են երկիւղ և ամօթ: Երկիւղ՝ որ թաղկացան ծառերու տակը, և ամօթ՝ որ մերկութիւնը ծածկեցին թըզենու տերեւերով:

§ 5, Պատիժը և գլխութիւնք:

Աստուած երեկոյեան ժամանակ պատուիրանազանցութեան օրը, գալիս է դրախտը, և քաղցրութեամբ կանչում է, Ադամ, ո՛ւր ես: Ադամ փոխանակ խոստովանելու իւր մեղքը, աշխատում է ար-

դարանալ, ձգելով պատճառը կնոջ վերայ, և կինը՝ օձի վերայ. և այսպիսի անպաշխար կամքի համար պատժուեցան մահով, հող էիք և ի հող դասանա : Աշխատանքն, որ դրախտում էր ուրախութիւն, դարձաւ ոգեմաշ քրտինք, որդեծնութեան օրհնութիւնն եղաւ Աւայի համար աղբիւր ցաւերի և մահուան, հիւանդութիւն և աղքատութիւն տիրեցին նոցա, երկիրը անիծուեցաւ իւր ծնունդներով. անբան կենդանիքը կորցրին դէպի մարդը առաջին հնազանդութիւնը և եղան թըշնամիք : Օձը անիծուեցաւ փորի սող գնալ և հող ուտել :

Աստուած այնպիսի արգար դատաստանով վճռելու մէջ ցուցանում է Իւր զուժը և սէրը դէպի մարդը, նորա ընկած երջանիկ վիճակը կրկին վերականգնելու, խոստանում է առաքել Փրկիչ, մարդկային դատապարտեալ բնութիւնը ազատելու, երբ օձին անիծելու ժամանակ, ասում է,

որ կնոջ զաւակը կը ջաղջախէ օձի գլուխը : Այս Չաւակն էր Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս, որ ժամանակը լրանալուց յետոյ՝ պիտի մարմին առնու, և ազատէ Ադամայ ծնունդը :

Ադամի ու Աւայի պատուիրանազանցութիւնը մեզ ուսուցանում է, որ մեղքի մէջ չ'պէտք է անզեղջ մնալ, և ոչ ուրիշն վերայ դնել պատճառը, այլ շուտով մեղայ ասել Աստուծուն, և ստանալ թողութիւն, և պատժից մնալ ազատ :

### § 6, Այլէն և Աբէլ :

Ախաստեղծներն արտաքսուելով դրախտից բնակուում են նորա հանդէպ, և պատուիրանազանցութեան թշուառութիւնքը շուտով երևում են նոցա սան մէջ : Ադամ ծնաւ երկու որդի Այլէն և Աբէլ, առաջինն էր երկրագործ և երկրորդը հովիւ ոչխարներու : Արքա երկուքը

զանազան էին բնութեամբ, և բերին Աստուծուն զոհ, Այսին երկրի բերքերից, և Աբելը ոչնար, բայց զանազանութիւնը չէր բերած զոհերի մէջ, այլ սրանքի ջերմեռանդութեան մէջ: Այսինի մատուցած զոհը էր անսիրտ, և Աստուած չընկալաւ, իսկ Աբելինը էր հաւատով և ուղիղ սրբտով և Աստուած ընկալաւ. այս պատճառաւ բարկացաւ Այսին և սպանեց եղբայրը զաշտում, և եղաւ առաջին օրինակ մարդասպանութեան. վասն որոյ անիծեց Աստուած Այսինին, և նա շրջում էր երեքեալ և տատանեալ, խղճմտանքը չէր թողում զնա հանդիստ, և փախաւ ծնողներից ու բնակեցաւ պանդխտութեան մէջ: Նորա որդիքը և թոռները գնացին Այսինի չար ճանապարհաւ, և էին մոլիք և չարազործներ, բաժանուեցան ճշմարիտ եկեղեցուց ու մոռացան Աստուածը և փրկութեան խոստումը:

Տէր Աստուած տուր ինձ զօրութիւն յաղթել մարմնական կրքերիս, տուրք պահեա լեզուս և ձեռներս արիւն թափելուց, ընդունիր իմ աղօթքս ինչպէս Աբելի պատարազը:

§ 7, Աբելի նահապետներ ջրհեղեղից առաջ:

Ադամ, որ շատ արտամած էր Աբելի մահուան վերայ, Աստուած մխիթարում է զնա տալով որդի Սէթ անուն: Արամէն ծնուեցան բարեպաշտ որդիք, Նոփս, Այնան, Մաղաղեկ, Յարեդ, Նոփք, Մաթուսաղայ, Ղամէք և Նոյ: Սոքա էին ճշմարիտ Աստուածապաշտութեան պաշտպաններ, Սուրբ Գիրքը կոչում է Որդիք Աստուծոյ: Սոքա անուանուում են Ահապետներ, որոց մէջ երեւելի գանուեցաւ Նոփք, որ կեանքի սրբութեան համար կենդանի վերացաւ երկինքը: Նոյի ժամանակ միանգամայն չարութիւնը տիրել էր

աշխարհի վերայ այնպէս՝ որ բաց ի Նոյի տանից չկար Աստուածապաշտ և առաքինի մարդ: Այլ թայ զաւակները ևս ամուսնանալով Ապենի զաւակներու հետ, նոցա ապականեալ վարք ու բարքին հետեւեցան, և այսպէս ապականուեցաւ ամենայն երկիր, և չարութիւնը այն աստիճան բարձրացաւ, որ ընդհանրական ջրհեղեղը լուաց և սրբեց երկրի երեսը:

### § 8, Ընդհանրական ջրհեղեղ:

Աստուած տեսնելով մարդկանց ապականութիւնը և անզղջութիւնը, կամեցաւ ջնջել զնոսա երկրի երեսից, և միայն պահել զՆոյ իւր ընտանիքով մարդկային ազգի բազմանալու համար. վասն որոյ հրամայում է Նոյին շինել Տապան, որի մէջ պիտի մաներ նա իւր ընտանիքով: Երբ որ Նոյ մտաւ Տապանի մէջ, առաւ իւր հետ և ամենատեսակ կենդանիներից,

սուրբերից եօթն եօթն, և անսուրբերից երկու երկու արու և էգ: Յետոյ եկաւ սաստիկ անձրև քառասուն օր և զիշեր, ջուրը բարձրացաւ ամենաբարձր սարերից այնպէս, որ այլ ևս ազատուելու հնար չկար, և ամենայն կենդանի թէ մարդ, թէ անասուն և թէ թռչուն խեղդուեցան, միայն ապրեցան նոքա՝ որք Տապանի մէջ էին: Զժրհեղեղը քաշեց մէկ տարի. և ապա Տապանը նստեցաւ Մասիս սարի զլեին, և ջուրը օրէ ցօր նուազում էր, և վերկացաւ սաստիկ քամի, ու ցամաքացրեց աշխարհը: Աստուծոյ հրամանով Նոյ դուրս եկաւ Տապանից իւր հետ եղածներով. և զոհ մատոյց Աստուծոյն իւր և կենդանեաց ազատութեան շնորհակալութեան նշան: Այս զոհը հաճոյ եղաւ Աստուծոյ, որ խոստացաւ միւսանդամ չաճել այնպիսի ջրհեղեղ:

Այս պատմութիւնը մեզ ուսուցանում է, որ Աստուած իւր երկայնամտութեամբ

էջ շուտով կատարում իւր արդարադատութիւնը, այլ սպասում է մեղաւորներու դարձին. բայց երբ որ նորա գտանուում են անզգայ և իրան կամքի ուղածն են կատարում, այն ժամանակ և Աստուած իւր դատաստանն է կատարում, կորցնելով չարագործը:

### § 9, 'Նոյի որդե՛ր:

Բարի զաւակները ստանում են իրանց հօր օրհնութիւնը, իսկ չարերը՝ անէծք. այս տեսնուում է 'Նոյի երեք որդւոց մէջ՝ Սէմի, Քամի և Յաբեթի: 'Նոյ Տապանից դուրս գալով բնակուեցաւ Մասիս սարի վեշումը, ուր անկեց այգի. երբ որ խաղողը հասաւ, քամեց, և չ՛գիտենալով զինու զօրութիւնը՝ խմեց այնչափ, որ հարբեցաւ, և քնած ժամանակ յետ ձգեց իր մէն շորը, ու երևեցաւ մերկութիւնը: Պըստիկ որդին Քամ տեսնելով այս, գնաց

պատմեց իւր եղբայրներուն ծիծաղելով, իսկ Սէմ և Յաբեթ վեր առան շոր և քամակ քամակ զնալով ծածկեցին հօր մերկութիւնը: 'Նոյ երբ որ զարթեցաւ, իմացաւ Քամի արածը, և օրհնեց Սէմին ու Յաբեթին, իսկ Քամին անիծեց: Քամից ծնուեցան չար զաւակներ, և Աստուծոյ եկեղեցին պահուեցաւ Սեմայ ազգի մէջ, որի որդին Աբիաքսաղ կառավարիչ եղաւ Աստուծոյ եկեղեցուն:

### § 10 Աշտարակաշէնութիւն:

'Նոյի սերունդը բազմանալով շայաստան աշխարհում, քօչեցին դէպ ի Միջագետք Սենաարի դաշտը, և խօսում էին մէկ լեզուով: 'Նոցա մէջ ծնաւ ամբարտաւան հօգի շինել յիշատակարան — քաղաք և աշտարակ, որի զուխը հասնի մինչև երկինքը, և սկսեցին շինութիւնը: Աստուած պատժեց նորանց այս ամբարտաւանութիւն:



նը՝ խառնակելով նոցա լեզուները այնպէս, որ այլ ևս չ'կարացին հասկանալ մէկ զմէկու խօսքը, և շինութիւնը ֆնաց կիսատ, ու ցրուեցան զանազան կողմեր աշխարհի երեսին, և այն կիսակատար շինութիւնը կոչուեցաւ Քաթիլօն, որ կը նշանակէ խառնակութիւն:

### § 11, Կապալապոսիան պիղքը:

Լեզուների խառնակութեան հետ մըտաւ ժողովրդեան մէջ և կամքի հաճոյքները. նոցա մէջ սկսաւ նսեմանալ ճշմարիտ Աստուածապաշտութեան լոյսը, նոքա մոռացան ճշմարիտ Աստուածը, և սկսեցին պաշտել արեգակը, լուսինը և աստղերը, և հետն ու հետը զանազան երկրային արարածներ, և մարդիք: Այս կոչուում է կապալապոսիան կամ հելեանոսոսիան: Սեմայ ազգը ևս ընկաւ կապալապոսութեան մէջ, վասն որոյ Աստուած իւր եկե-

ղեցին վերանորոգելու համար ընտրեց Սեմի ցեղեց մէկը՝ Աբրահամ անունով:

### § 12 Կալան Աբրահամ:

Երբ որ կապալապոսութիւնը տիրել էր աշխարհի վերայ, Աստուած, իւր Եկեղեցին վերականգնելու համար ընտրեց Սեմայ ցեղեց մէկ առաքինի և բարեպաշտ մարդ Աբրահամ անունով, որ կենում էր Քաղդէացւոց աշխարհում: Հրամայեց Աբրահամին թողնել իւր հայրենիքը և ազգը, և զնայ բնակուի այն երկրում, զոր նա կը ցուցանէ նրան, խոստանալով առնել զնա բազմաթիւ զաւակներու հայր, և թէ նորա ազգից կը ծնի աշխարհի Փրկիչը: Աբրահամ հաւատաց Աստուծոյ խօսքին, ու զնայ այն անձանօթ աշխարհը. սա էր Քանանացւոց երկիրը, որ կոչուում է Պաղեստինայ, և մայրաքաղաքն է Երուսաղէմ:

§ 13, Ուրիշ Աստուծոյ Եբրահիմի հետ:

Աստուած, աւելի հաստատելու համար  
Եբրահիմի հաւատը և յոյսը իւր վերայ,  
երևում էր նրան երազում և տեսիլքով:  
Մէկ անգամ երևեցաւ նրան, և ասաց, որ  
նա կ'լինի շատ ազգերու հայր, կուտայ  
նրան և նորա զաւակներուն Քանանա-  
ցւոց երկիրը, և այս ուխտի նշան սահմա-  
նեց Եփրատ-Յիսրայէլ, որ տղայ երեսայն ու-  
թիւն օրական թլիփատուի, և խոստացաւ  
ևս որ նրան կը ծնի որդի, և անունը կը-  
զնէ Իսահակ:

§ 14 Աստուծոյ հետ է գալի Եբրահիմի:

Եբրահիմի հիւրասիրութիւնը այնչափ  
մեծ էր, որ Աստուած հիւր եկաւ նորա  
մօտ: Մէկ օր Եբրահիմ վրանի դրանը  
նստած էր, տեսաւ որ երեք օտարական  
զնում են դէպի ինքը. զնաց նոցա առաջ

ու հրաւիրեց, պատրաստեց սեղան և նո-  
րանցմէ մէկը էր Աստուած. հաց ուտելու  
ժամանակ Աստուած կրկնեց իւր խոստու-  
մը Եբրահիմին, որ նա կը ծնի որդի. բայց  
նորա Սարրա կինը, որ վրանի ետե կանդ-  
նած էր, ծիծաղեցաւ, և յանդիմանուե-  
ցաւ անհաւատութեան համար: Այս խոս-  
տումը կատարեցաւ մէկ տարուայ վերայ  
երբ որ Եբրահիմ էր 100 տարեկան, և  
Սարրա 90 տարեկան ծնաւ որդի, և անու-  
նը դրին Իսահակ:

§ 15, Սորոսի և Գոմորի կործանումն:

Ոչ չարութիւնն է մեռում անպատիժ,  
և ոչ բարութիւնը անվարձ: Սորոմ և  
Գոմոր քաղաքներու բնակիչներու չարու-  
թիւնքը բարձրացան մինչև երկինքը, և  
Աստուած վճռեց կործանել այն քաղաք-  
ները. ուստի ուղարկեց երկու հրեշտակ-  
ներ, որք ազատեցին արդար Գովին նոցա

հետ ոչնչանալուց, և ապա իջաւ երկնքից կրակ ու ծծումբ, և այրեց բոլորը թէ քաղաքներում և թէ դաշտերում, որի տեղը կանգնեցաւ լիճ, և կոչուում է Սեբուս թափ:

### § 16, Խաահակի զէնածն:

Աստուած աւելի փառաւորելու համար Աբրահամի հաւատը, փորձում է զնա: Երբ որ Խահակ 25 տարեկան էր, հրամայում է նրան ողջակէզ մատուցանել Աստուծուն իւր միակ Խահակ որդին: Աբրահամ ամեննին չէ զրդուում այս հրամանի վերայ, այլ ամենայն հնազանդութեամբ տանում է Խահակին նշանակած տեղը, որ էր Գողգոթայ սարը՝ զոհելու: Աբրահամ կապեց որդու ձեռներն ու ոտները, ու դրաւ սեղանի վերայ, և երբ որ սուրն առաւ ձեռը, որ մորթէ, ահա Աստուծոյ հրեշտակը արգելեց նրան: Աստ-

ուած նորա այսպիսի անօրինակ հնազանդութեան համար օրհնում է նրան, և կրկնում է իւր խոստմունքը: Այս անցքը նշանակում էր Վրիստոսի մեռնիլը Խաչի վերայ մեր փրկութեան համար:

### § 17, Խահակի որդեգր:

Հնազանդ որդին ժառանգում է ծնողաց օրհնութիւնը: Այս տեսնում ենք Խահակի որդւոց մէջ: Նա ունէր երկու որդի, Ասաւ և Յակոբ, երկուսն էլ զանազան յատկութիւնք ունէին: Ասաւ էր վայրենաբարոյ, ամարդի, բարկացող, և որսորդութեամբ էր պարսպում, և սիրելի էր հօրը որսորդութեան համար: Նա ծնողաց կամքին հակառակ առաւ երկու կին կռակաշտ ազգից, որ Աստուած արգելել էր նոցա հետ խնամութիւն անել: Իսկ Յակոբ էր խաղաղ, պարկեշտ և հնազանդ ծնողաց, նա մնում էր տանը և օգ-

նում էր իւր մօրը տան գործերի մէջ, և մայրը սիրում էր նրան:

Երբ որ Խսահակ ծերութեան հասակում կուրացաւ, ասաց Ասաւին, որ գնայ որս բերէ, ու կերակուր պատրաստէ, որ ուտէ և օրհնէ նրան: Այս լսելով Ռեբեկայ, պատրաստեց նորտ ուղած կերակուրը, և Յակոբի ձեռով ուղարկեց. կերաւ Խսահակ և օրհնեց նրան:

§ 18, Յակոբի գնալը Մեջագետք և նորա որդիք:

Յակոբ վախենալով Ասաւի բարկութենից և նախանձից՝ որ չսպանէ օրհնութիւնը խելով պատճառաւ՝ փախաւ Մեջագետք Խառան քաղաքը իւր մօրեղբայր Լաբանի մօտ, ու պսակուեցաւ նորա երկու աղջկայ հետ, ուր կացաւ քսան տարի: Այսչափ ժամանակում ծնաւ տասներկու որդիք, որք եղան նահապետներ Խս-

րայէլացւոց տասներկու ազգին: Յետոյ Յակոբ իւր բոլոր ընտանիքով յետ դարձաւ Քանանացւոց երկիրը իւր Զօր տունը և ստացաւ Խարայէլ անունը, ու եղաւ կառավարիչ Աստուծոյ Արևելեցու, և սորա տան մէջ պահուեցաւ ճշմարիտ հաւատար:

§ 19, Յովսէփի լաճառագոյնը:

Յակոբի տասն մեծ որդիքը շատ էին արամեցնում հօրը իւրեանց մոլի կեանքով: Արցա մէջ միայն Յովսէփն էր մխիթարութիւն հօր՝ իւր պարկեշտութեամբ, և Յակոբ շատ էր սիրում նրան: Այս սէրը զարթեցրեց նորա և եղբայրներու մէջ առելութիւն դէպ ի նա, մինչև որ կամենում էին սպանել, եթէ Ռուբէն մեծ եղբայրը չէր աղատել, և յետոյ վաճառեցին օտարազգի վաճառականներու վերայ, որով ձգեցին ծերունի հօրը անմխիթար սգի մէջ, ասելով՝ թէ զազանը կերաւ:

## § 20, Յովեէի Եղբայրսն:

Իսմայէլացիք վաճառեցին Յովսէփին Եղբայրսնս: Պետափրէ պալատականի վերայ: Եւ լինելով օտար երկրում ինչպէս գերի, վարում էր իւր կեանքը առաքինութեամբ և համեստութեամբ, և սորա եղան նորա համար պատճառ զանազան նեղութեանց, մինչև որ բռնուեցաւ բանտում: Բայց Աստուած, որ փորձում է առաքինի մարդիքը զանազան փորձանքների մէջ, և իւր օգնութիւնը չէ կտրում նորանցմէն, այնպիսի բաղդաւորութեան հասցրեց Յովսէփին, որ երբէք մտածել չէր կարելի: Եւ սիրելի եղաւ Փարաւօնին, ապագայ եօթնամեայ սովը գուշակելու համար. և կարգեց նրան իւր երկրորդ և Եղբայրսնի իշխան, և յանձն արաւ Յովսէփին պատրաստել ցորեան պողարքեր տարիներում, որ սովի ժամանակ ժողովուրդը հացունենայ ուտելու: Յովսէփ կատարեց այս յանձնարարութիւնը:

## § 21, Յովսէփի Եղբայրներո՛ւ Գալը Եղբայրսնս:

Երբ որ սովը ամենայն տեղ սաստկացաւ, Յովսէփի եղբայրները եկան Եղբայրսնու ցորեան գնելու: Յովսէփ արդէն ունէր լաւ միջոց վրէժխնդիր լինելու իւր եղբայրներուն իրա ընդդէմ՝ զործած յանցանքների համար, բայց նա ամենեւին չէ յիշում նոցա չարագործութիւնը, այլ ընդունում է սիրով, և երկրորդ անգամի յայտնում է, թէ ինքը նոցա եղբայրն է, և առատ պաշարով ուղարկում է յետ, պատուիրելով բերել Եղբայրսնու իւրեանց հօրը բոլոր ընտանիքով:

## § 22, Յակօբի Գալը Եղբայրսնս:

Յակօբ ստանալով Յովսէփի կենդանութեան լուրը՝ լցուեցաւ մեծ ուրախութեամբ, և շուտով ճանապարհ ընկաւ:

Յովսէփ ընդ առաջ գնաց հօրը մեծ բազմութեամբ և այնպէս ընդունեց: Իմացարաւ Փարաւօնին իւր հօր զալուստը բռնոր ընտանիքով, և ներկայացրեց թագաւորին, և ամեն կերպով աշխատում էր, որ Յակօբ անցուցանէ իւր կեանքը երջանկութեամբ և խաղաղութեամբ: Այսպիսի կերպով փոխեցաւ Աստուծոյ Եկեղեցին Յակօբի ընտանեաց մէջ Վանանացւոց երկրից Եզիպտացւոց Գէսեմ քաղաքը, որ ունեցան իրանց հաստատ բնակութիւնը:

§ 33, Աստուծոյ Եկեղեցին Աբրահամի անց դուրս:

Բացի Աբրահամի տանից, կային և ուրիշ տեղեր Ճշմարիտ Աստուածապաշտներ՝ որք էին Մեկքիսեդեկ և Յօր:

Մեկքիսեդեկ էր թագաւոր Սաղիմայ, այսինքն Երուսաղէմի. նա էր քահանայ Աստուծոյ բարձրելոյ, և նորա հայրն ու

մայրը յայտնի չեն թէ ո՞ք էին. նա խորհրդաբար նկարագրում էր երկնաւոր քահանայապետ Յիսուս Վրիստոսին:

Յօր բնակում էր Արաբիայի Ասիդ գաւառում, էր յոյժ մեծատուն և առաքինի, ամենքից պատուած որպէս թագաւոր, ունէր հաստատուն յոյ Աստուծոյ վերայ, և ոչ մի ամենաթշուառ փորձութիւն չկարացին շարժել նորա Ճշմարիտ հաւատը: Աստուածաշունչ սուրբ գիրքը պատմում է, թէ Աստուած փորձելուց յետոյ Յօրի համբերութիւնը, վարձատրեց նրան առատապէս քան զոր առաջ ունէր, և կոչեցաւ Համբերահայր:

§ 24, Իսրայէլացոց զարգացումը Եգիպտոսում:

Յակօբի և Յովսէփի մահից յետոյ բազմացան Իսրայէլացիք Եզիպտոսում, մինչև որ ահարկու երևեցան Եզիպտացւոց

Թագաւորներուն, որ մի՛ գուցէ աւելի հզօրանան և տիրեն Ազգիպտոսին. ուստի ժամանակ չտալու համար, որ մտածեն նոքա իւրեանց ազատութեան վերայ, և արական սեռը պակսեցնելու համար, ծառայացնում էին զանազան ծանր աշխատութեանց մէջ, և Թագաւորը հրամայեց տաւամայրերուն, որ Խորայէլացոց նորածին երեխայքը խեղդեն. սակայն Աստուծոյ օրհնութիւնը աւելի բազմացնում էր նոցա թիւը:

§ 25, Մովսէսի շնորհը, և փախստար:

Այն հալածանքի ժամանակ ծնաւ Մովսէս: Նորա մայրը երեք ամիս ծածուկ պահեց նրան, և յետոյ Թագաւորի երկիւղեց զրաւ երեխային մէկ փոքրիկ սնտուկի մէջ, ու ձգեց Նեղոս գետի ափումը: Այդ միջոցին զալիս է Փարաւօնի աղջկը լեղնալու գետումը, և տեսնելով սնտուկը հրա-

մայեց բերել, և զտաւ նորա մէջ երեխայ, որ լացլում էր: Թագաւորի աղջկայ սիրտը դուրս շարժեցաւ, և տուաւ մէկ ծծմօր պահելու. նա էր երեխայի մայրը: Արբոր մանուկը երեք տարեկան եղաւ, Փարաւօնի դուստր արաւ նրան իւր որդեգիր, և անունը դրաւ Մովսէս, որ կնշանակէ Ջրեց հանած: Մովսէս մեծացաւ Թագաւորական պալատում 40 տարի, և վարժուեցաւ եղիպտական իմաստութեամբ: Սակայն նա՝ որ Աստուծումէն սահմանած էր Խորայէլի փրկիչ, փախաւ Մադիամացոց երկիրը, վախենալով՝ որ Փարաւօն չսպանէ նրան, իւր մէկ Ազգիպտացի սպանելու պատճառաւ: Նա մնաց օտարութեան մէջ 40 տարի և պարապում էր խաշնարածութեամբ:

§ 26, Մովսէսի դեպքանութիւնը Փարաւօնի Տօպ:

Մէկ օր Մովսէս արածացնելով ոչխարները Աինայ սարի մօտ՝ տեսնում է, որ

մորենին վառուած է, և չէ այրուում, և երբ որ մօտ դնաց տեսնելու, յանկարծ լսում է մորենու միջից ձայն, այս ձայնն էր աստուածային, որ նրան ռզարկում է Փարաւօնի մօտ իւր ժողովուրդը արձակելու: Մովսէս և նորա եղբայր Ահարոնը ներկայանում են Փարաւօնին, և պատմում են Աստուծոյ հրամանը, բայց նա չլսեց, և ապա տասն հրաշքներով, որի վերջինն էր Ազիպացուց բոլոր անդրանիկներու ջարդելը, հազու թէ կակղացաւ Փարաւօնի խոտասրտութիւնը, և արձակեց Իսրայէլացիքը:

§ 27, Իսրայէլացոց եւր. — Պատեւր. —  
Փարաւօնի կորստի:

Իսրայէլացիք Ազիպոսից դուրս գալուց առաջ՝ Աստուծոյ հրամանով պիտի կատարէին Պատեւր վերջին երեկոյին Նիսան (Մարտ) ամսի 14ին: Ամեն տուն

պիտի մորթէր անարատ և շեշակ դառը, խորովել, և ուտել բաղարջով, որ նշանակում էր մեր փրկութիւնը Յիսուսի Քրիստոսի զինելով խաչի վերայ. և սահմանեց ամենայն տարի կատարել նոյն ամսաթուին իրանց աղատութեան յիշատակ Ազիպոսից: Այն երեկոյին Իսրայէլացիք ճանապարհ ընկան դէպի Պարմիր ծովը: Այս ժամանակ Աստուած առաջնորդում էր նոցա ցերեկը ամպեղէն սիւնով, և գիշերը հրեղէն սիւնով, որ ցուցանում էր ճանապարհը: Երբ որ հասան Պարմիր ծովի ափը, ահա Փարաւոն հասաւ նոցա ետեւից զօրքով: Իսրայէլացիք ընկան ահուգողի մեջ, և Մովսէս Աստուծոյ հրամանով խփեց զաւազանը ծովին, և ջրերը որպէս քարէ պարիսպներ կանգնեցան աջ ու ձախ, ու Իսրայէլացիք անցան միւս ափը ինչպէս ցամաքի վերայ: Փարաւոն պնդեցաւ նոցա ետեւից, և Մովսէս խփեց կրկին զաւազանը, և միացան ջր-

րերը, ու խեղդեցին Փարաւոնին բոլոր  
ղորքով:

ԵԿԵՂԵՑԻՆ ԳՐԱՒՈՐ ՕՐԷՆՔԻ ՆԵՐՔՈՅ:

§ 28, Տասն պատուիրաններ:

Ազիպտոսից դուրս գալուց յիսուն օր-  
ուայ վերայ տալիս է Աստուած Խորայէլա-  
ցուց Մովսէսի ձեռքով Սինա սարի վե-  
րայ տասն պատուիրաններ զրած երկու  
քարեղէն տախտակների վերայ, և Ակեղե-  
ցին մանուժ է զրաւոր օրէնքի ներքոյ, որ-  
պէս զե Խորայէլացուց կոպտութիւնը,  
խտասարտութիւնը, հակամխտութիւնը դէ-  
պի կռապաշտութիւն բոլորովին վերացնէ,  
և շինէ նրանցը քաղաքավարի, կրթեալ և  
Աստուածապաշտ ժողովուրդ:

Տասն պատուիրաններով Աստուած ու-  
սուցանում է մեզ մարդկային երկու զըլ-  
խաւոր և հարկաւոր պարտաւորութիւնքը

մեր բոլոր կեանքի մէջ, այն է՝ Աստուած-  
այրն-Մէն և ընկերայրն-Մէն, և են սքա.

1, Ես եմ քո Տէր Աստուածը, բաց ի  
ինձմէն՝ ուրիշ աստուածներ չունենաս:

2, Ի՞նչ համար կուռք չչինես, երկրպա-  
ղութիւն չտաս և չպաշտես նրանց:

3, Ի՞նչ Տէր Աստուծոյ անունը չայշես  
անոտի բաների վերայ:

4, Շարաթ օրը սուրբ պահես, վեց օր  
քո ամենայն գործերդ կատարես, և եօթ-  
ներըրորդ օրը, որ է քո Տէր Աստուծոյ շա-  
բաթը գործ չանես:

5, Պատուիր քո հօրն ու մօրը, որ քեզ  
բարի լինի, և երկար կեանք ունենաս եր-  
կրի վերայ:

6, Մի սպանաներ:

7, Մի շնար:

8, Մի գողանար:

9, Մի սուտ վկայեր ընկերիդ համար:

10, Մի ցանկանար քո ընկերի ամենայն  
ունեցածներուն:

§ 29, Եկեղեցական և աստուածաբան օրէնք:

Բաց ի տասն պատուիրաններից Աստուած տալիս է և ուրիշ օրէնքներ, որք էին նոցա եկեղեցական և քաղաքական կարգաւորութեանց համար: Մինչ այս ժամանակ Խորայեղեան նահապետները չունէին նշանակած Աստուածպաշտութեան համար մէկ հաստատ անդ և ժամանակ, այժմ Մովսէս Աստուծոյ հրամանով շինեց Եկեղեցին, որ կոչեցաւ Խորան փայտաբեան, որ էր մեծ վրան, ուր լինում էր հանդիսով Աստուածպաշտութիւն, և բաժանւում էր երեք, 1, Արահ, ուր լինում էին զոհադործութիւնքը և օրինական լուացմունքը. 2, Արբո-նե-ն, ուր էին աստուածաբանաց սեղանը, որի վերայ դնում էին տասներկու բազարջ հացեր. Եւնկոյ սեղանը և եօթնաջահեան ուղտանայր. 3, Արբո-նե-ն արբոյ, ուր էր Տապանակ ուրիշ, և նորա միջ կային օրէնքի տախտակ-

ները, ոսկէ սափորը մանանայով լեքը, և Ահարոնի ծաղկեալ գաւազանը, և նորա ասջև Մովսիսական օրէնքի զիրքը:

Խորայեղացիք ունէին և եկեղեցական տօներ. 1, Ահարոն, այն օրը դործ էին կատարում. 2, Պատէ և արծ Քաղաքակէրաց՝ էր յիշատակ աղատութեան Եզրիպատոսից. 3, Պէնսիկոսի, յիշատակ տասն պատուիրանների տալուն. 4, Տարեգլու-ն, որ էր քաղաքական ամսի առաջին օրը. 5, Քա-ն-նեան արծ. 6, Տաղա-արահարաց, յիշատակ քառանասակայ ճանապարհործեան Արաբիայի անապատում. 7, Ահարոնի, որ իմաց էին տալի փողեր փշերով: Նոցա Աստուածպաշտութեան սրբազան դործողութիւնքն էին. 1, Աղջակէղ՝ որ բոլորովին կայրէին զոհը. 2, Փրկո-նեան և Խաղաղո-նեան զոհ, էր նշան շնորհակալութեան Աստուծումէն ընկալած բարերարութեան համար. 3, Քա-ն-նեան զոհ, ահամայ և անդիտութեան մեղքի համար.

4, Հանապապարհեան ողջակեղ, որ ամենայն առաւօտ և երեկոյ կը մատուցանէին.

5, 'Նա-էր+ կամ անարի-ն զոհ, որ էր շարմազ ալեւը, ցորենի նոր հասկ բոված, իւղ, զինի, աղ, կնդրուկ կամ խունկ:

Սրբագործ պաշտօնեայքն էին. 1, Վահանայապետ, 2, քահանայք, որք էին Ահարոնի ցեղեց. նոցա զործն էր զոհագործութիւն և խունկ ծխել վկայութեան խորանում, և 3, Վևտացիք, որք էին խորանի հասարակ ծառայողներ:

§ 30, Վասն անամայ ճանապարհորդութեան:

Խորայեւացիք լինելով կոշտ ու կոպիտ ժողովուրդ, և սովորած սարկութեան, երբեք չէին զգում ազատութեան իրաւունքը և պատիւը, Աստուծոյ արած բարեբարութիւնքը: 'Նոքա միշտ տրանջում էին Մովսէսի վերայ, յիշում էին Ազգիպատուի

տիս ու սխտորը, ձմերուկը, միսը, հացը, բայց ոչ երբեք քաշած չարչարանքը և նեղութիւնքը: 'Նոքա չհասկացան աստուածային խնամքը, որ ոչինչ չէր պակաս նրանցը ճանապարհորդութեան ժամանակ, չհասկացան թէ Աստուած երկնային հացով է կերակրում նրանցը, ապառաժ քարերից ջուր է բղխեցնում, ժամանակին մտով է կերակրում, մինչև անգամ ընկնիլ և կռապաշտութեան մէջ, երկրպագութիւն տալով ոսկէ հորթին: Թէպէտ Աստուած զանազան տեսակ մահով և սպանելով պատժեց նրանցը, այլ նոքա մնացին անզղացողութեան մէջ, ուստի վճռեց որ քսան տարեկանից բարձր մեռնին անապատումը, և ժամանակ նշանակեց 40 տարի, թափառական շրջեցնելով Արաբիայի ապառաժ անապատի մէջ, մինչև որ մեռան, և ապա մտան Աւեստաց երկրի սահմանները:

§ 31, Տեառ-նի-ն Վաստա-որաց ժամանակի  
 Վերայ:

Մովսիսի մահից յետոյ Իսրայէլացիք  
 կառավարուում էին դատաւորներով, բայց  
 կառավարութիւնն էր Աստուածայեսա-  
 կան, որովհետեւ Աստուած էր դատաւոր  
 ընտրողը, և ամենայն գործերի ու պատե-  
 րազմերի մէջ ներգործողը: Մովսէս իւր  
 մահուան ժամանակ, Աստուծոյ հրամա-  
 նով ընտրեց Յեսու Վաւեայ որդին իւր  
 փոխանորդ առաջնորդ Իսրայէլեան ազգի:  
 Նա յաղթեց Յորդանան գետի երկու  
 կողմի ազգերին, և տիրեց Վանանացւոց  
 երկրին, որ կոչուում է Պաղեստինայ, և  
 այսպէս կատարեցաւ աստուածային խոս-  
 տումը տուած Եբրահամին, և Նոյի անէծ-  
 քը տուած Քանանին: Յեսու բաժանեց  
 նուաձած երկիրը Իսրայէլեան ցեղերու  
 վերայ, իսկ Ղևտական ազգը չունեցաւ  
 առանձին բաժին. այլ պիտի ապրէին զո-

հերից և տասանորդից, և նոցա բնակու-  
 թեան համար նշանակուեցան մի քանի  
 քաղաքներ իւրաքանչեւր ցեղի մէջ: Այլ  
 յուրեան խորանի տեղն էր Մելոմ քաղա-  
 քը Նփրեմի վիճակում: Յեսուայ մահից  
 յետոյ ընտրուում են Վաստաւորներ:

Վաստաւորաց դարը նկարագրում է Իս-  
 րայէլացւոց կրած թշուառութիւնը շըր-  
 ջակայ կռապաշտ ազգերից, որոց ներքոյ  
 ընկան օրէնքի զանց առնելով: Չարու-  
 թեանց պատճառն էր, որ Իսրայէլացիք  
 Յեսուայ մահից յետոյ, ոչ թէ վերջացրին  
 Վանանու ազգի մնացորդը, այլ առնելով  
 վնաս հարկատու, ունեցան նոցա յետ  
 յարակցութիւնը, մանաւանդ ամուսնու-  
 թեամբ, նորա պտուղներն եղան, թողու-  
 ճշմարիտ Աստուածը և պաշտել Բահա-  
 ղը (արեղակ) և Աստարը (լուսինը),  
 որք էին Վանանացւոց գլխաւոր կուռքե-  
 րը, և բարքի ապականութիւն, յաճախա-  
 կի անիշխանութիւն, փոխադարձ նախանձ

և վէճեր՝ զանազան ցեղերու մէջ, բազմամեայ ստրկութիւն այլազգեաց իշխանութեան ներքոյ: Այս ստրկական լծի ծանրութիւնը, որի տակ ճնշուում էին, զգացնում էր նոցա յանցանքը, և զարթեցնում էր նոցա միտքը դիմել առ Աստուած. յայնժամ Աստուած յարուցանում էր ընտրեալ անձինք մինը միւսից յետոյ, որ կոչուում են *Գադաարի Իսրայէլ*: 'Նորաքաջալերուած աստուածային ոգևով՝ յաղթում էին թշնամեաց, ազատում էին ազգը նոցա լծի տակից, վերականգնում էին ճշմարիտ աստուածապաշտութիւնը, և կառավարում էին ազգը մինչև իւրեանց մահը: 'Նոցա թիւն է 12, որոց մէջ երեւելի են Գեբորա կին մարգարէուհի և Բարակ, Գեդէոն, Յեփթայի և Սամսոն: Սոցա հետ պէտք է հաշուել և Հեղե քահանայապետը, որ ամենքից յետոյ առաւ իւր ձեռքը դատաւորի իշխանութիւնը քահանայապետութեան հետ, և Սամու-

էլ, որ էր մարգարէ և Գատաւոր: 'Նորապատերազմում էին զօրքով, և յաղթեցին Վանանացւոց, Մադիամացւոց, Ամազէկացւոց և Ամոնացւոց, բայց Սամսոն առանց զօրքի ինքն միայնակ էր պատերազմող Փղշտացւոց հետ: 'Նա էր 'Նազովբեցի, այսինքն ուխտեալ Աստուծոյ, զինի և արաղ չպիտի խմէր և նորա զբնին չպիտի զիպէր ածելի, և նորա զօրութիւնը, որ բնականից դուրս էր, մազերի մէջն էր: Այս ընտրեալ մարդը ցուցեց իւր օրինակով, թէ մեծ և հզօր մարդիկ ենթարկուած են և մեծ թուլութեան: 'Նա թըշնամեաց ահարկուն յաղթուեցաւ մի պոռնիկ կնոջեց Գալիլա անունով, որի հետ ունէր սաստիկ սէր, և յայտնեց նրան իւր զօրութիւնը թէ մազերիցն է, վասն որոյ կինը ածիլել տուաւ նորա գլուխը, և Սամսոն ընկաւ թշնամեաց ձեռքը, ու կուրացաւ: Այս եղաւ անգամ կին սիրելու հեռանքը:

§ 32, Տեո-Ռե-ն Լաբա-որայ Ժամանակի  
վերայ:

Սամուէլ Տերութեան հաստիում բա-  
ժանեց դատաւորական կառավարութեան  
բեռը իւր երկու որդւոց վերայ, որք առա-  
քինութեամբ և անշահասիրութեամբ չէին  
նմանում իրանց հօրը. նորա առնում էին  
յանցաւորից կաշառք և ուղիղ դատաւ-  
տան չէին դատում. Ժողովուրդը զգուած  
և նեղացած նոցա կաշառառութիւնից,  
խորհուրդ արին դատաւորական կառավա-  
րութեան յեղափոխութեան վերայ, և  
քաղաքական միապետական իշխանու-  
թիւն հաստատելու համար. վասն որոյ  
ներկայանում են Սամուէլին, և խնդրում  
են տալ նրանց թագաւոր միւս ազգերու  
նման: Սամուէլ շատ է նեղանում այս  
առաջարկութեան վերայ, յորդորում է  
և համոզում է զնոսա հեռանալ այնպիսի  
նպատակից, ասելով՝ թէ Աստուած է նո

ցա թագաւորը, բայց լսող չկայ, զի զկա-  
ւոր պատճառ այն ապստամբութեան էին  
նորա որդիքը: Մարգարէն չգտաւ ոչինչ  
հնարք զսպելու կամ խաղաղացնելու Ժո-  
ղովրդեան խռովութիւնը, զիմում է առ  
Աստուած, և ստանում է աստուածային  
համաձայնութիւնը թագաւոր կարգելու,  
և Աստուծոյ ցուցանելով ընտրում է Սա-  
ւուղ Աիսեանին Բենիամինի ցեղից:

Սաւուղ թագաւորեց քառասուն տա-  
րի, և այսչափ միջոցում երկու տարի  
միայն կացաւ Աստուծոյ հնազանդութեան  
մէջ. իսկ 38 տարի զնաց Աստուծոյ հրա-  
մաններին հակառակ: Սամուէլ յայտնեց  
նրան աստուածային վճիռը, թէ նորա  
թագաւորութիւնը խլած է նորա տանից  
և ուրիշէն է առւած. և նորա կենդանու-  
թեան ժամանակ Սամուէլ Աստուծոյ  
հրամանով օծեց Յուդայի ցեղից Յես-  
սեայ որդի Դաւիթը թագաւոր Խորայէի:  
Այս պատճառով Սաւուղ հալածում էր

նրան և ետեից ընկել էր սպանել, և Վաւիթ շրջում էր թափառական մինչև Սուււուղի սպանուելը Փղշտացւոց պատերազմում: Նորա մահից յետոյ Վաւիթ հանդիսով օծուեցաւ թաղաւոր Վերրոնում, և իւր բնակութեան տեղ ընտրեց Նրուսաղէմը, որի վերին մասը Սիօն կոչուած լեառը, որ էր անառիկ բերդ, արաւ թաղաւորանիստ և փոխադրեց այն տեղ Տապանակ ուխտին: Վաւիթ հնազանդեցրեց իւր իշխանութեան ներքոյ շրջակայ թըշնամի աղբերը, և երկիրը խաղաղութեան մէջ էր: Նա սպանել տուաւ Ուրիա Վետացուն և նորա Բերսաբէ կինը առաւ իւր կին, որիմէն ծնաւ Սողոմոն: Նա իւր յանցանքի համար կրեց զանազան թըշուառութիւնք և զլսաւորապէս իւր որդի Աբիսողոմից հալածանքը: Նա թէպէտ ընկնում էր յանցանքի մէջ, բայց մի և նոյն ժամանակ ապաշխարում էր և էր ջերմեռանդ առ Աստուած, որի ապացոյցն

է Սաղմոս կոչեցեալ զիրքը: Նա էր և մարգարէ, ինչպէս երևում է Սաղմոսից: Նա կամենում էր շինել Աստուծոյ համար անշարժ տաճար, բայց Աստուած յայանեց, թէ արիւնոտ ձեռները չեն կարող շինել այն, և պիտի շինէ նորա որդի Սողոմոնը:

Վաւիթ մահից յետոյ նստաւ Սողոմոն, որին Աստուած պարգևեց իմաստութիւն: Նորա ժամանակ Խորայէլեան թաղաւորութիւնը շատ հզօրացաւ, ընդարձակուեցաւ և հարստացաւ: Նա շինեց Աստուծոյ համար հոյակապ տաճար, ուր փոխադրեց Տապանակ ուխտին: Նա պսակուել էր շատ կանանց հետ կռապաշտ ազգերից, որք ծուեցին նորա սիրտը ճշմարիտ Աստուծումէն և շինեց կոռց մեհեաններ: Ասարն որոյ Աստուած պատառեց նորա թաղաւորութիւնը նորա մեռնելուց յետոյ:

Սողոմոնին յաջորդեց նորա որդին Ռոբովամ, և սորա ժամանակ բաժանուեցաւ

Թագաւորութիւնը երկու՝ Յոգայեան և Իսրայէլեան: Ռորովամ իշխեց երկու ցեղին, և նորա ծառայ Յերթովամը տասն ցեղին:

§ 33, Յոգայեան Լագա-որո-նի-ն:

Յուդայեան Թագաւորութիւնը էր Դաւթի ցեղեց, Թէպէտ փոքր էր, բայց աւելի պատուաւոր, զի նորա ձեռին էր Տապանակ ուխտին և տաճարը, և ամենայն Հրէայ պարտական էր ամենայն տարի գնալ Երուսաղէմ և մատուցանել տաճարին իւր նուէրը, իսկ Իսրայէլեան Թագաւորութիւն էր աւելի բազմամարդ և ընդարձակ ու զօրաւոր: Յուդայեան Թագաւորութիւնը շարունակեցաւ 375 տարի, և մի դար աւելի քաշեց քան Իսրայէլեանը, նորա գահի վերայ նստեցան քսան Թագաւորներ, նոցա մէջ արժանաւորներ և Աստուածապաշտներ էին միայն

վեց անձինք՝ Ասա, Յովսափատ, Ոզիա, Յովսթամ, Եզեկիա և Յովսիա, իսկ մնացածները անբարոյականներ, աստուածուբացներ, և կռապաշտներ: Առաջններու Թագաւորութիւնը էր տեղական և նշանաւոր ներքին բարեկարգութեամբ, Ճշմարիտ աստուածապաշտութեամբ և փառաւոր յաղթութիւններով արտաքին թշնամեացվերայ, իսկ միւսներունը ըստ մեծի մասին էր կարճ ժամանակով և անբարդութեամբ: Նոցա Հեռանալը Ճշմարիտ աստուածապաշտութենից և ժողովրդի մոլութիւնը պատճառ եղան Յուդայեան Թագաւորութեան ընկնելուն: Նախուգորոնտոր Բաբելացոց Թագաւորը քանդեց Երուսաղէմը, յափշտակեց տաճարի սուրբ անօթները, և Յուդայի ազգը գերի տարաւ Բաբելոն, ուր մնացին 70 տարի:

§ 34, Իսրայէլեան Լաֆաւորութիւն:

Իսրայէլեան թագաւորութիւնը, որի ատոնն էր Սամարիա, տեւեց ՉԱԿ տարի: Կորա առաջին թագաւորն էր Յերոբոս վամ. նա վախենալով թէ կրօնը, որ կապել է նորա հպատակները Արուսարէմի հետ, կրկին կը ձգէ նրանցը Յուդայի թագաւորութեան իշխանութեան տակ, վասն որոյ այս երկիւղը փարատելու համար՝ մտածեց ձգել նոցա մէջ կրօնական բաժանումը, ձուլել տուաւ երկու ոսկէ երկնջներ, և դրաւ մէկը Բեթէլ, և միւսը Դան, սահմանեց նոցա համար առանձին տօներ, առանձին քուրմեր, և ասաց ժողովրդին. « Ահա սոքա են քո աստուածներդ, Իսրայէլ, որ քեզ հանեցին Ազիպտոսից », :

Ժողովուրդը, որ հակամէտ էր դէպ ի կռապաշտութիւն, նորա մեծ մասը պաշտեցին վերոյիշեալ կուռքերը, և Իսրա-

յէլեան թագաւորութեան մէջ տարածեցաւ կռապաշտութիւնը, զի նորա 19 թագաւորներու մէջ չ'ըտանուեցաւ առաքինի և աստուածապաշտ անձը, այլ ամենեքեան հետեւեցան Յերոբոսի օրինակին, և էին կռապաշտներ ու մողք: Աստուած շատ անգամ իւր ընտրեալներու ձեռքով, որոց մէջ երեւելի էին Ազիա և Ազիսէ, խրատեց յետ դառնալ չար ճանապարհից, բայց ոչ ոք չդարձաւ. վասն որոյ և մատնեց նրանցը Ասորեստանի Սաղմանասար թագաւորի ձեռը, որ քանդեց Սամարիայն և ուրիշ քաղաքներ: Իսրայէլացիք իւրեանց թագաւոր Ավսիայի հետ գերի զնացին Ասորեստան և բնակուեցան Ափրատի միւս կողմը:

Արկիւրը մնաց անբնակ, և Սաղմանասար լցրեց դաղթականներով ուղարկուած Բաբելոնից, Ասորիսերից և Միջագետքից, որք բնակուեցան Սամարիայում, և ուրիշ անբնակ քաղաքներում, և երկիրը

անշէն լինելու պատճառաւ դարձել էր  
բնակարան գազաններու և առիւծներու,  
որք մեծ վնաս էին հասուցանում նորեկ  
գաղթականներուն: Աորա այս վերադրե-  
ցին Խորայելի Աստուծոյ բարկութեանը,  
զոր չէին պաշտում, վասն որոյ խնդրեցին  
Սաղմնասարից ուղարկել իւրեանց մօտ  
Հրէից քահանայ, որ ուսուցանէ նոցա  
Խորայելի Աստուծոյ պաշտօնը: Ուղար-  
կուած քահանայն բնակուեցաւ Բեթէ-  
լում, և ուսուցանում էր թէ ի՞նչպէս  
պէտք է ծառայել Հրէից Աստուծուն և  
Մովսէսի օրէնքներուն: Աորա յօժարու-  
թեամբ բնդուեցին հաւատը ճշմարտին  
Աստուծոյ վերայ, բայց միևնոյն ժամանակ  
խառնեցին նորա հետ և իւրեանց սնա-  
պաշտութիւնքը, և ծագեցաւ այն խառն  
կրօնը, որ յետոյ կոչեցաւ Աղանդ Սամա-  
րացոց: Ժամանակ անցնելուց յետոյ տա-  
ճարը շինեցին Գարիզին սարի վերայ, և  
ունէին առանձին քահանայապետ և քա-

հանայ, որք զինքեանս համարում էին  
Ահարոնից իջած:

§ 35, Հրէայ+ Բաբելոնեան Երեսնու-  
հինգուորդ տարուց:

Աբուղոզոնոսոր տիրելով Հրէաստա-  
նին և գերի տանելով նրանցը ցրուեց Բա-  
բելոնացոց աշխարհի զանազան կողմերը, և  
մեծ բազմութիւն բնակեցրեց Վօբար գե-  
տի ափումը: Այս օտարութեան մէջ և  
թշուառ վիճակում նդովում են այն ա-  
մենայն իրանց վերայ եկած ապարադաւու-  
թեանց պատճառները, և սրտի զգացմուն-  
քով թափում են արտասուք՝ յիշելով  
Աբուսաղէմը:

Աստուած տեսնելով նոցա ջերմեանդ  
ապաշաւը՝ կակղացնում է Աբուղոզո-  
նոսորի սիրտը, որ շատ հեզութեամբ վար-  
վում է գերի Հրէից հետ, թոյլատրում է  
համարձակ պաշտել իրանց հաւատը,

զննել հող, ունենալ իւրեանց սովորութեամբ դատաւորներ, և ամենայն դործերը վճռել իւրեանց հայրենի օրէնքով, և նորանցմէն շատերը ստացան պաշտօններ տէրութեան մէջ: Նաբուզոդոնոսոր այսչափ բարեսրտութեանց հետ, հրամայեց, որ Հրէական երեւելի ցեղերից ընտրել ուշեմամիտ տղայք, սնուցանել արքունեաց մէջ, և ուսուցանել Վաղդէական դպրութիւնը, որոց մէջ երեւելի գտնուեցան Վանիէլ, Անանիա, Աղարիա և Միսայէլ, և նոցա դրաւ քաղդէական անուններ, Ռադգասար, Սեդրաք, Միսաք և Աբեղնագով: Վանիէլ արժանացաւ և Աստուածային յայտնութեան, որ թագաւորի մոռացած երազը ոչ ոք Ռաբիլոնեան իմաստուններից չիարաց պատմել և մեկնել՝ բաց ի Վանիէլից, մինչև որ հեթանոս թագաւորը զարմացած այս իրողութեան վերայ՝ հրապարակաւ դաւանեց թէ՛ «Ղշմարիտ Աստուածը, միմիայն Հրէից Աստուածն

է, և ոչ այլ ոք, Նա է Տէր տերանց և թագաւոր թագաւորաց, և Վանիէլ կարգեցաւ կառավարիչ Ռաբիլոնի և դրութիմաստունների, իսկ նորա երեք ընկերները՝ նորա օգնական, և այսպէս ստացան Հրէայք իրաւունք համարձակ պաշտելու ճշմարիտ և սուրբ հաւատք:

Աւելի ևս համարձակութիւն դատաւ ճշմարիտ Աստուածպաշտութիւնը հեթանոսական աշխարհում, երբ որ Սեդրաք, Միսաք և Աբեղնագով երկրպագութիւն չտալով Նաբուզոդոնոսորի պատկերին, երբ որ երես առ երես անարգելով նորա հրամանը՝ այս մասին ընկան բորբոքեալ հնոցի մէջ, և նախախնամութիւնը պահեց նրանցը անվնաս, մինչև որ թագաւորը անձամբ տեսաւ, և նոցա հետ ևս չորրորդ անձը, որ նմանեցրեց Աստուածորդւոյն, ուստի և հրովարտակով և պատժով արգելեց իւր տէրութեան մէջ հայտնել Հրէից Աստուածը: Եւ այսպէս

Հեթանոսական աշխարհի մէջ ճշմարիտ աստուածապաշտութիւնը բարձր կանգնեցաւ քան զհեթանոսութիւնը: Ըրեայք ակումբն քաշելով սպասում էին խոստացեալ Մեսիայի դալուն, և նոյնը քարոզում էին: Ըրէից զերութիւնը զլսաւորապէս պատրաստեց հեթանոսներուն Մեսիային ընդունելու համար:

§ 36, Տօբէի և նորա Տօբէի որդին:

Իսրայէլեան թագաւորութիւնը կործանուելուց յետոյ Սաղմանասարի ձեռով Տօբիթ գերի պնաց միւսներու հետ Նինուէ, և ունենալով պատիւ Ասորեստանի թագաւորի մօտ՝ օգնում էր իւր հայրենակիցներուն, հոգալով նոցա պակասութիւնքը և թաղելով անտէր մեռածները: Նա կուրացաւ մէկ զիպուածով, և այս պատճառեց նրան զրկուել հարստութենից և ընկնիլ աղքատութեան միջ: Տօբիթ ու-

նէր մի որդի Տուբիա անուն և կրթում էր նրան Աստուածապաշտութեան և բարոյականութեան մէջ, և տուաւ նրան այս խրատները:

„ Կեանքիդ մէջ միշտ յիշէ քո Աստուածը, պահիր նորա պատուիրանները, անիրաւութիւն չանես. եթէ ճշմարտութիւն և արգարութիւն գործես, քո ամենայն բանը յաջող կ'լինին:

„ Ողորմած կայ աղքատներուն, որ Աստուած էլ քեզ կողորմի. գիտացիր, որ ողորմութիւնը մահից կը փրկէ:

„ Բարի վարք ունեցիր, և ողջաստեղեր. օտարազգի կ'ին չառնուս և աղջեկ չտաս նրան, այլ մեր ազգից ան, և տներ:

„ Մշակի վարձը մօտէ չպահես, այլ նոյն օրը տաս:

„ Մի անիր ուրիշին այն բանը, ինչ որ չես ուզում անէ քեզ ուրիշը:

„ Այնչափ զինի չեմես, որ հարբես:

», Քաղցածներուն տօ՛ւր Հաց և տկո՛րքին շոր, և ինչ որ քեզմէն աւելնայ՝ ողորմութիւն տօ՛ւր:

», Խելօք մարդուն խորհուրդ հարցրօ՛ւ:  
Եւն:

Այս խրատները խորը սպաւորուեցան Տուբիայի սրտի մէջ: Արանի այն ծնողներուն, որք իւրեանց զաւակները կը կրթեն մատաղ հասակում:

Յետոյ Տուբիա հրեշտակի առաջնորդութեամբ գնաց Եկբատան քաղաքը իւր ազգականի մօտ, և պսակուեցաւ նորա աղջկայ վերայ: Ապա ստանում է իրանց պարտականից տասն տաղանդ արծաթը և վերադառնում է հօր մօտ. և հրեշտակի ցոյց տուած ձկան լեղին, ածում է հօր աչքերի վերայ, և նոյն ժամայն բացւում են: Տուբիա իւր հօր նման լինում է առաքինի, և ողորմած աղքատներու, և հայր ու որդին սուրբ Պրբի մէջ յիշատակութեան տեղ են գտանում:

### § 37, Յուդիէ:

Բաբելոնացւոց Հողեփեռնէս զօրավարը պաշարեց Հրէից Բեթեղուայ ամուր քաղաքը, որի բնակիչները ընկան ահուգողե մէջ: Այն քաղաքում բնակուած էր մի այրի կին Յուդիթ անուն, գեղեցիկ երեսով, բարեպաշտ և սրտոտ, քաջալերեց նրանցը՝ փոքր ժամանակ դիմանալ նեղութեան, և Աստուած կազատէ շուտով: Աս հազաւ հարսնութեան շորերը, և գնաց Հողեփեռնէսի մօտ և ասաց, որ ինքը կարող է դանել հնաբք քաղաքին տիրելու: Յուդիթի գեղեցկութիւնը խափեց Հողեփեռնէսին, և սիրահարուեցաւ նրան: Մէկ օր մեծ հրաւեր արաւ, և այնչափ խմեց՝ որ հարբեցաւ, ամենեքեանքն գնացին և մնացին միայն երկուսը վրանի մէջ: Հողեփեռնէս անզգայ պառկած էր անկողնի մէջ, և Յուդիթ տեսնելով որ լաւ ժամանակ է սպանել թշնամուն, ա-

ուաւ նորա թուրը, և ամենայն զօրութեամբ խփեց նրա շնքին ու կտրեց զլուսը, և դրաւ սրարիկ մէջ, ու տուաւ իւր նաժիշտին և հեռացաւ զիշերով: Պնաց քաղաքը խնդալով, ցոյց տուաւ քաղաքացւոց թշնամի զօրավարի զլուսը, և միւս առաւօտը յարձակուեցան թշնամեաց վերայ, սկսան կոտորել և հալածել, և այսպէս մէկ տկար կին յաղթեց թշնամեաց, ազատեց իւր հայրենիքը և արժանի եղաւ ունենալ սուրբ Պրքի մէջ իւր անունի յիշատակութիւնը:

§ 38, Հրէայք Պարսից էշիանու-իւեան ներ-  
+ոյ:

Աիւրոս թագաւոր Պարսից տիրեց Քաբիւնին և բոլոր Արեւելքին, և կատարեցաւ Արեմիայի զուշակութիւնը Հրէից ազատութեան վերայ եօթանասնամեայ գերութենից յետոյ: Նա իւր թագաւոր-

րութեան առաջին տարին հրաման հանեց իւր տէրութեան մէջ, որ Աստուած տալով նրան երկրի թագաւորութիւնը, հրամայել է նրան շինել Արուսաղէմի տաճարը, վասն որոյ արձակեց բոլոր Հրէայ գերիքը գնալ իւրեանց հայրենիքը, իսկ տեղական բնակիչներուն, որոց մէջ գտանուում էին Հրէայք, հրամայեց օգնել նոցա, որչափ կարող են: Այս ժամանակ լրացաւ 70 տարին: Աիւրոս տուաւ նոցա շատ անօթներ պատկանած Արուսաղէմի տաճարին: Հրէայք Պարբարէլե (որ՝ Դաւթի ցեղից էր) առաջնորդութեամբ և Յեսու քահանայապետի, շարունակեցին իւրեանց ճանապարհը դէպ ի Արուսաղէմ 42 հազարից աւելի տղամարդ, թող ծառայքը: Իսկ Պանիէլ մնաց Քաբիւնում և չտեսաւ իւր հայրենիքը, բայց տեսաւ տեսիլքի մէջ աստուածային քաղաքի վիճակը մինչև Քրիստոս:

Յետև և Օօրաբարէլ շինեցին զոհա-  
զործութեան սեղանը, ապա ձգեցին տա-  
ճարի հիմը մեծ հանդիսով: Մամարացիք  
առաջարկեցին շրէից ընդունել և իւր-  
եանց օգնութիւնը, բայց ստացան բացա-  
սութիւն, ուստի ամենակերպ ջանք զործ  
զրին խափանել շինութիւնը, սակայն նո-  
քա շինեցին տաճարը, Անգէստ և Մաղա-  
քիաս մարդարէից յորդորանքով, իսկ  
Սբէր-Նի-ն «բնոց խորանը մնաց դատարկ  
Տապանակի անհետանալու պատճառաւ:

Աիւրոսի յաջորդներից Արտաշէս թա-  
զաւորը խնամք ունէր շրէից վերայ. նա  
հրաման տուաւ Եղբաս քահանային տա-  
նել մնացած շրէայքը Երուսաղէմ նոցա  
ցանկութեան համաձայն, և դարձրեց տա-  
ճարի մնացած անօթները՝ որ յափշտա-  
կել էր «Նաբուզոդոնոսոր, և հրաման՝ ըս-  
տանալու զանձապահներից յայնկոյս Եփ-  
րատայ զանձը տաճարի հարկաւորութեան  
համար: Ստացաւ նոյնպէս թագաւորից

իրաւունք վերահասու լինելու օրէնքի  
պահպանութեան վերայ, պատժել օրի-  
նազանցները, կարգել վերակացուք և դա-  
տաւորներ բարեկարգութեան: Եղբաս  
1700 շրէաներով վերադարձաւ Երու-  
սաղէմ, ժողովեց շրէայքը և համոզեց  
նրանցը արձակել հեթանոս կանայքը, և  
բոլորովին կտրել նոցա հետ ամենայն հա-  
ղորդակցութիւնքը, որպէս զն չչարժի  
աստուածային բարկութիւնը իւրեանց  
վերայ:

Երուսաղէմի պարիսպը քանդուած էր,  
և չէր ապահով շրջակայ թշնամիներից:  
Մէկմի անուն շրէայն, որ Արտաշէսի սի-  
րելի պալատականն էր, առաւ թագաւորից  
հրաման շինելու պարիսպը, և հրովարտակ  
տեղական կառավարիչներու վերայ տալ  
թագաւորական անտառից փայտ: Մէկմի  
գալով Երուսաղէմ՝ յաղթեց ամենայն  
դժուարութեանց և շինեց պարիսպը 52  
օրում:

## § 39, Եսթեր:

Աստուած՝ իւր ընտրեալները չէ թողում ձեռից, թէև յանցանքի համար պատժում է, բայց յարուցանում է պաշտպաններ, որպէս Եսթերը զերութեան ժամանակ: Աս էր Արտաշէսի պալատական ծառայի Մուրթքէի անունն շրէի ազգական, կրթուած Զմարիա Աստուածպաշտութեան մէջ. և էր երեսօք և հասակով զեղեցիկ. և բազում այնպէս բերեց, որ նա դարձաւ Արտաշէսի կին Մուրթքէի հնարքով:

Նաման առաջին նախարարը սաստիկ ատում էր Մուրթքէին իրան երկրպագութիւն չտալու համար, և հրաման հանեց թագաւորից սպանել բոլոր շրէայքը, որ նորա թագաւորութեան մէջ կան, որպէս կասկածաւոր և ապտամբ ազգ, որպէս զև և Մուրթքէ նոցա հետ սպանուի, ուստի և պատրաստեց կախաղան նորա

համար. բայց նախախնամութիւնը այլ անեսակ փոխեց այդ բանը: Ասթեր թագուհին Մուրթքէի խրատ տալով հրաւիրեց թագաւորին և նամանին իւր մօտ ճաշե երեք անգամ, և վերջին անգամին յայտնեց Արտաշէսին նամանի դաւաճանութիւնը զէպ ի ինքը և իւր ազգը: Թագաւորը բարկացաւ նամանի վերայ, և հրամայեց կախել նրան իւր պատրաստած կախաղանիցը, և հրովարտակով յետ առաւ առաջին տուած հրամանը սպանութեան համար: Ասթեր և Մուրթքէ այս մեծ զիպուածի յիշատակը պահելու համար կարգեցին Փոքի՛ կամ Վիճակ ասացեալ տօնը, որ շրէայք կատարում են և այժմ:

## § 40, Ժամանակ Մակեդոնական իշխանութեան:

Երբ որ Աղեքսանդր Մակեդոնացին տիրեց Պարսից, զնաց Արուսաղէսի վե-

րայ, այն ժամանակ Յաղոս քահանայապետը հազաւ քահանայապետական զգեստը, իսկ քահանայք և Ղևտացիք սպիտակ զգեստներ, և այսպիսի հանդիսով զնաց աշխարհակալն առաջ: Աղէքսանդր բոլորովին փոխուեցաւ այս տեսարանով, իջաւ երիվարից և երկրպագութիւն արւաւ Աստուծոյ, որի անունը զրաժ էր քահանայապետական խոյրի վերայ, և ասաց իւր մեծամեծներուն, թէ նա այսպիսի անձը տեսաւ Մակեդոնիայում տեսիլքի մէջ, որ խոստացաւ նրան յաղթութիւն Պարսից վերայ: Յետոյ խաղաղութեամբ մտաւ Արուսաղէմ, զո՛հեց Աստուծոյ տաճարում, քահանայապետը կարգաց Ղանիէլն մարգարէութիւնը նորա տիրապետութեան վերայ: Աղէքսանդրը հրաման տուաւ շրէից հաստատպահել հայրենի օրէնքը և Աստուածպաշտութիւնը: Սամարացիք նորա հրամանով շինեցին առանձին տաճար Ղարիզին

լեռան վերայ, և կարգեցին առանձին քահանայապետ և քահանայք:

Աղէքսանդրի մահից յետոյ Ազիպտացւոց Պտղոմէոս թագաւորը տիրեց Պաղեստինային և մինչև 100,000 շրէայ և Սամարացի զերի տարաւ Ազիպտոս, ուր մնացին 100 տարի, և խաղաղ կեանք էին վարում:

#### § 41, Թարգմանո-ւն-ն Ասորո-աշաղիկ:

Ազիպտացւոց թագաւոր Պտղոմէոս Փիղադեղփոսի ժամանակ թարգմանեցաւ սուրբ Գիրքը Աբրայականից Յունարէն, որ կոչուում է Եօթնասանից Թարգմանո-ւն-ն: Պտղոմէոս ցանկանալով հարստացնել Աղէքսանդրիայի զբառուներ՝ զրքեր ժողովեց ամենայն տեղերից, և կամենալով ունենալ շրէից օրէնքի զիրքը, դեսպան ուղարկեց Աղիազար քահանայապետի մօտ և ընծաներ տաճարի համար Աղիազար

ժողովեց Իսրայէլեան տասներկու ցեղերից վեց վեց մարդ, որք քաջ զիտէին Յունական լեզուն, և յանձնելով նոցա սուրբ Գիրքը՝ ուղարկեց Եգիպտոս:

Պտղոմէոս սիրով ընկալաւ նրանցը և թարգմանելու տեղը նշանակեց Փորոս կղզին, ուր 72 աւուր մէջ թարգմանեցին Յունարէն, և կարդացին Եգիպտոսում եղած Հրէից առջև, զոր ամենեքեան հաւանեցին, և դրաւ զբատան մէջ: Այս ընտիր թարգմանութենից է թարգմանած Հայերէն Աստուածաշունչը սուրբ Սահակի ձեռով և նորա աշակերտներու օգնականութեամբ:

§ 42, Հաւածանի Հրէից վերայ, — Մակաբայեցի:

Հրէայք Սելևկիացւոց իշխանութեան ներքոյ ունեցան փոքր ժամանակ խռովութիւն, բայց Անտիոքոս Եպիփան, այր

անօրէն և արծաթատէր, մեծ հալածանք վերկացրեց նոցա վերայ. կողոպտեց Երուսաղէմը, այրեց լաւ շէնութիւնքը, քանդեց պարիսպները, ստիպեց ընդունել հեթանոսութիւնը, դրաւ տաճարում Երամազդի արձանը, արգելեց Աստուածաշունչութիւնը, օրէնքները, ծէսերը, և շատերուն սպանել տուաւ: Այս հալածանքի ժամանակ նահատակուեցաւ դառն տանջանքներով Եղեալար քահանայ 90 տարեկան ուսեալ և առաքինի անձը, և Շամունէ կին եօթն որդիներով խոզե միս չուտելու համար:

Աստուած, որ միշտ պաշտպանում է իւր Եկեղեցին, չթողեց բոլորովն ընկնիլ այլ յարուցանում է Մատթիայ քահանային, Մակաբայեան տան ազգապետին, որ վառուած օրէնքի նախանձով՝ քանդում է կուռքի սեղանը, սպանում է նորա վերայ խունկ ծխող Հրէային, ձայն է տալի ժողովրդեան, «Ո՛վ որ օրէն»

քի պահպանող է՝ իմ ետեւից դայ, : Ժողովեցան շատերը և գնացին սարը, Ասորւոց զօրքը հասաւ նոցա ետեւից շաբաթ օրը, և սպանեցին 1000 մարդ, որովհետեւ Հրէայք այն օրը չպատերազմեցան, և Մատաթիա վճռեց որ շաբաթ օրը ևս պատերազմեն: Ժողովեց կրկին զօրք և յաղթեց թշնամեաց, քանդեց կռատուները, թլփատեց երեխայքը, վերականգնեց օրէնքը և հայրենեաց ազատութիւնը: Եւստ վախճանը թէպէտ կտրեց նորա յառաջադիմութիւնքը, բայց նորա հինգ որդիքը՝ Յովհաննէս, Եմաւօն, Յուդայ Մակաբէ, Եղիազար և Յովնաթան կանգնեցան նորա տեղը և մինչև ի մահ պաշտպանեցին ազգը և կրօնը:

§ 43, Յուդայ Մակաբէի և նորա եղբայրներու գործքն:

Յուդայ Մակաբէ իւր հօր մահից յետոյ եղաւ կամաւոր զօրքի զլուխ: Նա ան-

երկիւղ պատերազմեցաւ թշնամեաց հետ, սակաւաթիւ զօրքով յաղթեց Ասորւոց Պտղոմէոս Նիկանովրին և Պիօրդի զօրավարներուն:

Անտիոքոս Նախիւան լսելով իւր Նիւսիաս զօրավարի յաղթուելը Յուդայ Մակաբէից, մեծ զօրքով գնաց Հրէից վերայ բոլորովին ջնջել. բայց Աստուծոյ պատիժը շուտ հասաւ նրան ճանապարհի վերայ և որդնալից սատակեցաւ: Անտիոքոսի մահից յետոյ պատերազմը շարունակուում էր Ասորւոց և Հրէից մէջ. Յուդայ միշտ յաղթում էր, բայց մէկ անգամ 800 մարդով պատահեցաւ 22000 Ասորի ընտիր զօրքին, աներկիւղ պատերազմեցաւ, և մեծամեծ քաջութիւն անելուց յետոյ սպանուեցաւ:

Նրան յաջորդեցին Յովնաթան և Եմաւօն եղբայրները: Յովնաթան մեծ օգուտ քաղեց Ասորւոց թագաւորութեան մէջ ընկած խռովութենից, և ցուցանե-

լով Ղեմետը թագաւորին օգնութիւն  
 թշնամեաց դէմ՝ ստացաւ քահանայա-  
 պետութիւնը, իսկ Անտիոքոս Յից ծիրա-  
 նի և թագաւորական նշան, բայց Տրիփոն  
 բռնեց նրան նենդութեամբ ու սպանեց:  
 Աորա տեղը բռնեց Շմաւօն եղբայրը, որ  
 խլեց Ասորւոց ձեռքից Միօն լեառը, և  
 ստիպեց նրանցը ճանաչել շրէից ազգի  
 անկախութիւնը: Շմաւօն ընդարձակեց  
 և ամրացրեց Հայրենեաց սահմանները,  
 զբաւ դաշը Հռոմայեցւոց և Սպարտա-  
 ցւոց հետ, և նորա կառավարութեան ժա-  
 մանակ շրէայք վայելում էին ամենատե-  
 սակ խաղաղութիւն: Աորա որդին Յով-  
 Հաննէս, մականուանեալ շիւրկանոս,  
 այսինքն թշնամեաց քանդող, նուաճեց  
 Վալիլիայն, Սամարիայն և Ադոմայեցի-  
 քըն, ստիպեցին նրանցը ընդունել Մով-  
 սիսական օրէնքը, և քանդեց Վարիզենի  
 տաճարը:


§ 44. Եւստանակ Հռոմայեան իշխանութեան:

շիւրկանոսի թոռները շիւրկանոս Ա.  
 և Արիստաբուղոս Ա. վեճելով միմեանց  
 հետ ծայրագոյն իշխանութիւնը խլելու  
 իբարու ձեռքից՝ դիմեցին Հռոմայեցւոց  
 Պոմպէոս զօրավարին՝ խնդրելով նորա օգ-  
 նութիւնը: Պոմպէոս մտաւ զօրքով Ա-  
 բուսադէմ, և շրէաստանը շինեց Հռոմե-  
 ական նահանգ: շիւրկանոսին տուաւ քա-  
 հանայապետութիւնը առանց թագաւո-  
 րական իշխանութեան, իսկ Արիստոբուղոս  
 և նորա որդիքը շղթայակապ ուղարկուե-  
 ցան Հռոմ:

Մակաբայեցւոց ազգի ընկնելով՝ բարձ-  
 րացաւ շերովդէսի ցեղը: շերովդէսի  
 հայրն էր Անթիպատրոս, ազգով Ադոմա-  
 յեցի, իսկ հաւատով շրէայ, որ իւր ցոյց  
 տուած ծառայութեան համար Ազիպատ-  
 տում Յուլիոս Աեսարին՝ ստացաւ Հռով-  
 մական քաղաքացութիւն և բզեշտու-

Թիւն շրէից վերայ: Նորա մահից յետոյ նորա որդին շերովդէս կարգուեցաւ շոռմի սենատից շրէաստանի Թաղաւոր: Նորա ՅԿ տարուայ Թաղաւորութեան պատմութիւնը լի է ահարկու չարագործութիւններով: Իւր իշխանութիւնը անկասկած պահելու համար գործ զրաւ սպանութիւն: Նա չինայեց ոչ ժողովրդին և ոչ ազգականներուն, խեղդել տուաւ իւր աներորդի Արիստոբուղոսին, որին ինքն էր կարգել քահանայապետ, սպանել արւաւ իւր հարազատ քրոջ մարդուն, յետոյ իւր զորանչին և կին Մարիամին, որ Մակաբայեցւոց վերջին ժառանգն էր, և իւր երկու որդիքը ծնած նրամին: Ապա անսնելով Թէ ժողովուրդը ատում է իրան, և դուրէ տպտամբութիւն ծագուի, ուստի խաղաղացնելու համար ամենքին վերանորոգեց Չօրաբաբելեան տաճարը շատ փառաւոր շէնքով: Նորա Թաղաւորութեան վերջին տարին ծնաւ խոստա-

ցեալ Մեսիայն հեթանոսաց անկալութիւնը 5199 Թուին Նօթանասնից հաշուով և 4000 Թուին շրէից կամ ժամանակագրաց հաշուով աշխարհի ստեղծելուց:



# Ս. ՊԱՏՄՈՒԹԻԻՆ

ՆՈՐ ՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԵՂՆԵՐՆԵՐ:

§ 45. ԾՆՆՆԵՐ ՅՈՒՆԻՆԻՆԻ ՄԵՐԿԵ:

Արուսաղէմի երկրորդ տաճարի քահանայից մէջ կար մէկը Չաքարիա անունով, և նորա կնոջ անունն էր Աղլիսարէթ, երկունն էլ առաքինիք և արդարներ, բայց ծերացած կին և որդի չունէին:

Մէկ օր Չաքարիա մտաւ տաճարը խնկարկուծեան համար, և երևեցաւ նրան Աստուծոյ հրեշտակը աւետելով Յոյհաննէսի ծնունդը. բայց Չաքարիա չհաւատալով հրեշտակի խօսքին՝ համբարացաւ մինչև որդու ծնուիլը, ու յետոյ բացուեցաւ լեզուն: Յոյհաննէս բնակուում էր անպատում, և ապա Աստուծոյ հրամանով զնոց Յորդանան և քարոզում էր փրկու-

Թեան ապաշխարութիւն, մկրտում էր մեղքերը խոստովանողներուն, և աւետում էր թէ Աստուծոյ արքայութիւնը մերձեցել է, այսինքն է Մեսիայի դալուստը:

§ 46, Սորբե Աոյա Մարիամի աւետիքը:

Գարբիէլ Տրեշտակը Աստուծոյ հրամանով եկաւ Գալիլիայի Նազարէթ քաղաքը Մարիամ Աուսի մօտ, որ Գաւթի տանիցն էր և Յովսէփի հետ նշանուած, որին աւետեց Մեսիայի ծնունդը. թէպէտ Մարիամ շփոթուեցաւ այն խօսքի վերայ, բայց Տրեշտակը երբ որ ասաց՝ «Նողին սուրբ գայ քո մէջ»,՝ հնազանդեցաւ, և նոյն ժամին յղացաւ. Յովսէփ տեսնելով նրան յղե, ընկաւ կասկածի մէջ, սակայն Տիրոջ Տրեշտակը տեսնան մէջ ասաց՝ թէ նա յղացած է Նողով սրբով, և երեսուցի անունը գնէ Յիսուս, որ կը թարգմանի Փրկիչ:

§ 47, Փրկիչ Ծնունդը:

Այս ժամանակ շրէայք լինելով Նոմախան իշխանութեան ներքոյ, Օգոստոս կայսր հրամայեց աշխարհագիր անել իւր թագաւորութեան մէջ: Յովսէփ գնաց Մարիամի հետ իւր հայրենի Բեղղեհեմ քաղաքը զրուելու աշխարհագրի մէջ. և Մարիամի ծնելու ժամանակը հասաւ, ու ծնաւ Յիսուսին, և պատեց խանձարուրի մէջ, և դրաւ մերումը, որովհետեւ կենալու տուն չկար: Յիսուսի Ծննդեան ժամանակ շրէից թագաւորն էր Ներովդէս:

§ 48, Նովեմբերու երկրպագութիւնը:

Յիսուսի ծննդեան զիշերին Աստուծոյ Տրեշտակը երեւեցաւ հովիւներուն՝ որ զիշերով պահում էին իւրեանց հօտը, և աւետեց նոցա Փրկիչ Ծնունդը, նշան տալով նրանց դտանել մանուկը խանձա-

րուրի մէջ պատած և մտրումը դրած: Հո-  
վեւները տեսան և հրեշտակներու բազ-  
մութիւն, որք օրհնում էին զԱստուած  
և ասում էին. « Փառք ի բարձունս Աս-  
տուծոյ, և յերկիր խաղաղութիւն ի մար-  
դիկ հաճութիւն, »: Երբ որ հրեշտակնե-  
րը վերացան, զնացին հովեւները Բեդղե-  
հէմ, և զտան մանուկը, ու երկրպագու-  
թիւն տուին:

#### § 49, Յետոյ Ռիսարոնիւնը:

Յիսուսի Մանդեան ութ օրից յետոյ  
կատարեցին հին օրհնքը թրփատելով մա-  
նուկը, և անուն զրին Յիսուս, ինչպէս  
հրեշտակը պատուիրել էր Յովսէփին տես-  
լեան մէջ:

#### § 50, Տեսանը Կաթաղ:

Քառասուն աւուր վերայ ծնուելոց  
յետոյ, Մարիամ և Յովսէփ տարան Յի-

սուսին տաճարը, ուր Միմէօն արդար ծե-  
րունին, որին հրեշտակն ասել էր չմեռնիլ  
մինչև որ տեսնէ օծեալ Տիրոջը, Հոգւոյն  
Արբոյ ազգեցութեամբ եկաւ տաճարը,  
առաւ մանուկը զրկի մէջ, օրհնեց նրան,  
և խնդրում էր կեանքից արձակումը:

#### § 51, Քրիստոսի Գալիլէա Երթը:

Յիսուսի Մանդեան ժամանակ երեւե-  
ցաւ մի անսովոր աստղ արեւելքում, որ  
տեսնելով մոզերը, իմացան թէ Փրկիչ է  
ծնել, և եկան Արուստղէմ, ու այն տե-  
ղից գնացին Բեդղեհէմ երկրպագանել  
նրան: Հերովդէս խմանալով մոզերից  
նոր թագաւորի Մանդըրը, խռովեցաւ,  
կասկածելով մի գուցէ զօրանայ մանուկը  
և խլէ նորա թագաւորութիւնը. հրամա-  
յեց կոտորել Բեդղեհէմի գաւառի երե-  
խայքը երկու տարեկանից ցածր, կարծե-  
լով թէ Յիսուսն էլ նոցա հետ կուսան:

ուի. սակայն Յովսէփ, հրեշտակի խօսքով,  
առաւ Մարիամին և մանուկը ու փախաւ  
Եգիպտոս, ուր մնաց մինչև Հերովդէսի  
մահը, և յետոյ դարձաւ Գալիլեայ:

§ 52, Յիսուսի Մկրտութիւնը:

Յիսուս երեսուն տարեկան մկրտուե-  
ցաւ Յոհաննէսից Յորդանան գետում:  
Եւր ժամանակ բացուեցաւ երկինքը, Հո-  
գին Սուրբ աղաւնու նման իջաւ երկնքից,  
և Հայրն Եստուած վկայեց վերեւից՝  
« Գաէ իմ սիրելի որդին, Որին Ես հա-  
ճեցայ,»: Սորամով յայտնուեցաւ Երրոր-  
դութեան ծածկեալ խորհուրդը:

§ 53, Սառսնայից փորձուիւնը:

Մկրտութենից յետոյ Հոգին տարաւ  
Յիսուսին անապատ սատանայից փորձ-  
ուելու, ուր մնաց ծով քառասուն օր և

զիշեր, և յետոյ քաղցեցաւ: Սատանայն  
աշխատեց զանազան հնարներով խաբել  
նրան, մօտ տարաւ քարերը, որ հաց շե-  
նէ, կանգնեցրեց քաղաքի աշտարակի վե-  
րայ, որ իրան ցած գցէ. տարաւ սարի  
դուխը, ցոյց տուաւ աշխարհի թագաւո-  
րութիւնքը, և խոստացաւ տալ նրան՝  
եթէ երկրպագութիւն կուտայ իրան. բայց  
ամենայն բանի մէջ խայտառակեցաւ սա-  
տանայն, և հրեշտակները մօտացան ու  
պաշտեցին Յիսուսին:

§ 54, Վրիստոսի փորձութեան արարելն:

Երրոր Վրիստոս դարձաւ անապատից  
դէպ ի Յորդանան, ժողովեց աշակերտներ  
և իւր հետ տարաւ Գալիլեայի կողմերը,  
և Ղանա քաղաքումը հրաւիրուած լինե-  
լով հարսանիքում՝ արաւ առաջին հը-  
րաշքը՝ ջուրը փոխելով զինի: Յետոյ ըս-

կաւ քարոզել ասպշխարութիւնն և արքայութիւնն:

Չատկի տօնին զնաց Յիսուս Երուսաղէմ, և տեսաւ որ Աստուծոյ տաճարին պատշաճաւոր յարձանք չէին տալի, այլ եկեղեցին դարձել էր առուտուրի տեղ, և շինեց թոկից խարազան, և բոլորին էլ դուրս արաւ տաճարից: Այս ժամանակում շատերը այն կողմի բնակիչներից հաւատացին նրան, որոցմէն Աիկողիմոս Հրէից իշխանը, գիշերով եկաւ Յիսուսի մօտ երկնքի արքայութեան վերայ խօսելու համար: Ապա Յիսուս շրջեցաւ աշակերտներու հետ Յուդայի զանազան կողմերը, քարոզելով ամենայն տեղ: Չմեռը կրկին զնաց Վալիլիայ, և ճանապարհի վերայ խօսեցաւ Սամարացի կնոջ հետ եկած Մեսիայի վերայ, որով շատացան հաւատացեալները, և ընդհակառակն Վաղարէթի բնակիչները, փոխանակ ուղղելու իրանցը նորա քարոզութեամբ, մտածե-

ցին վնասել նորա կեանքը: Յիսուս զնաց Վափառնայում, ուր բժշկեց հարիւրապետի որդին, և Վալիլիայում մի բորոտ անդամալոյծ, որոց համբաւը հռչակուեցաւ ամեն տեղ, բայց Փարիսեցիք նախանձուելով նրա հետ՝ խօսում էին և մտածում էին չարութիւնք նորա վերայ:

§ 55. Վարդոյն-Մեսան երկրորդ գաւրն:

Յիսուս՝ քարոզութեան երկրորդ տարին կրկին զնաց Երուսաղէմ, ուր բժըշկեց երեսուն և ութ տարուայ անդամալոյծը Պրոպատիկէ աւազանի սրահումը: Յետոյ դարձաւ Վալիլիայ, և շաբաթօրը ուսուցանում էր ժողովրդին Վափառնայումի մէջ ու բժշկեց մէկ մարդոյ դօսացեալ ձեռը, ցոյց տալով Փարիսեցւոց, թէ բարի դործերը թոյլարուած է և շաբաթ օրերումն էլ դործել: և Փարիսեցիքն ու կարդացողները այնչափ վայրացան,

մինչև որ կամենում էին սպանել, այլ Յիսուս հեռացաւ մօտիկ սարի վերայ ժողովրդեան բազմութեան հետ: Այն տեղ աղօթքի կանգնեցաւ և ընտրեց տասներկու աշակերտներ առաքելական պաշտօնի համար: Արից ցած դարով բժշկեց հիւանդներուն, և խօսում էր աշակերտներու և ժողովրդեան հետ Աենաց Բանը:

Յիսուս կրկին դարձաւ Ասիառնայում, ուր բժշկեց հարիւրապետի ծառային, իսկ Նային քաղաքում յարութիւն տրւաւ մի աղքատ այրի կնոջ մեռած որդուն: Ապա շրջում էր ամենայն կողմերը և քարոզում էր Աւետարանը: Վարդութենից և զանազան հրաշներից յետոյ Յիսուս մտաւ նաւի մէջ կամենալով անցնել միւս կողմը Պաղիւիայ ծովակին. և երբ որ քնած էր նաւի վերայ, վերկացաւ սաստիկ քամի, որ ամենքը վախեցան, և աշակերտները զարթեցրին նրան, խնդրելով օգնութիւն: Յիսուս վերկացաւ հրա-

մայեց քամուն և հանդարտուեցաւ. և դուրս գնալով ցամաքի վերայ մտաւ Պերզեսացւոց երկիրը, բժշկեց զիւսհարներուն, յարութիւն տուաւ Յայրոս ժողովրդապետի մեռած աղջկան, բժշկեց երկու կոյրեր, որք նորա ետևից գնացին Նազարէթի ճանապարհի վերայ. օգնեց ամենքին ինչ որ ուզում էին, ոչ մէկ նեղացածին բացատրութիւն չարաւ, այլ ամենքին ցուցանում էր կարեկցութիւն: Երջելով Պաղիւիացւոց քաղաքները ուղարկեց տասներկու աշակերտները զանազան տեղեր քարոզել Աւետարանը, բժշկել հիւանդները և յն. որք յետ եկան Յիսուսի մօտ Պասեքից առաջ: Այս ժամանակումը Յովհաննէս Մկրտիչ գլխատուեցաւ բանտի մէջ Հերովդէսի հրամանով:

Այն ժամանակ Յիսուս թողնելով Հերովդէսի երկիրը՝ կաւ Բեթսայիդա անապատը, ուր հինգ հացով և երկու ձկնով

կերակրեց հինգ հազար հոգի, և հացի կտորտանքը ժողովեցին տասներկու քթոցի մէջ: Այս ժամանակին աշակերտներից մի քանիսը թողին նրան, էլ հետը չգնացին. որովհետև յայտնեց նրանց, թէ նոքա կատանան նորամէն ո՛չ թէ ժամանակաւոր, այլ յաւիտենական և երկնային բարութիւնքը: Առաքեալները յայտնեցին իւրեանց հաստատ հաւատը նորա վերայ, և Յիսուս առաջին անգամ յայտնեց նրանցը, թէ նրանցմէն մէկը է ապստամբ ու նրան կը մատնէ:

§ 56, Վարդու-թեան երրորդ պարբն:

Վարդու-թեան երրորդ սարին Յիսուս Պատեքի ժամանակ Արուստակէմուսը չէր, այլ գնաց Տիւրոսի և Սիդոնի ծովե ափը. և մէկ Վանանացի կին դուրս դալով իւր բնակութենից Քրիստոսի առաջ՝ խնդրում էր բժշկել իւր աղջկը հիւանդու-

թենից: Յիսուս լսելով նորա աղաղակը և տեսնելով նորա հաւատը՝ ասաց. կին դու, մեծ է քո հաւատը, լինի քեզ ինչպէս որ կամենում ես. և կինը գնալով իւր տուն՝ տեսաւ աղջկանը բժշկուած: Յետոյ Պաւլոսի ծովե ափերում եղած քաղաքների մէջ բժշկեց շատ հիւանդներ, կաղեր, կոկորտեր և խուլեր: Այս տեղ եօթը հացով և մի քանի ձկնով կերակրեց չորս հազար հոգի՝ բաց ի կանայքներից և երեսաններից: Բեթսայիդում կուրին լուսաւորեց, Փիլիպպոսի Աեսարիա քաղաքում կրկին յայտնեց աշակերտներուն իւր համար, թէ մարդկային ազգը եկել է փրկելու՝ առաջագոյն պատմելով իւր չարչարանքը, մահը և յարութիւնը:

§ 57, Վրէստոսի Պայծառակերպ-նի-նը:

Վեց օրից յետոյ Յիսուս վեր առաւ իւր հետ Պետրոսին, Յակոբոսին և Յովհաննէսին, ու տարաւ Թաբոր սարի գլու-

խը, ուր ցոյց տուաւ նրանց իւր Աստուածութեան փառքը, և երեւեցան նրան Մովսէս և Եղիա որ խօսում էին այն ամենայն անցքի վերայ, որ պիտի պատահէին Յիսուսի հետ Երուսաղէմում. և ահա ամպը հովանի եղաւ նոցա, ամպից լսուեցաւ ձայն. « Դա է իմ սիրելի Որդին. Դրան լսեցէք, »: Երբ որ սարից իջան, կրկին պատմեց աշակերտներուն իւր չարչարանքը և մահը: Պափառնայում քաղաքում տուաւ նորամէն պահանջած հարկը, և յանդիմանեց աշակերտներուն, որ վիճում էին մեծութեան վերայ: Երբոր եկաւ Յիսուս տաճարը, սկսաւ քարոզել տաճարումը. բարկանում էին Հրէայքը, և ուզում էին բռնել բայց Նիկողիմոս չթողեց. միւս օրը կամենում էին քարկոծել, բայց նա ծածուկ դուրս գնաց տաճարից, և անցնելով Սամարիայն՝ ընտրեց 70 աշակերտներ, և ուղարկեց զանազան քաղաքներ, Աւետարանը քարոզելու համար:

Ինչ ժամանակ Պասեքի չորրորդ օրը մօտ կացաւ, Յիսուս գնաց Երուսաղէմ, և մտաւ մէկ Փարիսեցի իշխանի տուն շաբաթ օրը, ուր բժշկեց ջրգողեալին: Այս ճանապարհորդութեան մէջ բժշկեց տասն բորոտներ, և Բեթանիայում յարութիւն տուաւ չորս օրուայ մեռած Վազարոսին. այս հրաշքով շատերուն ձգեց իւր կողմը, որի պատճառաւ Հրէայք աւելի ևս կատաղեցան և ճանապարհը պահեցին ծածուկ, որ սպանեն. և որովհետեւ դեռ չէր հասել ժամանակը, ուստի և ոչ որ ձեռք տուաւ նրան, և Յիսուս գնաց Ափրայիմ, և այս տեղեց դառնալու ժամանակ կուրի աչքը բաց արաւ Երիզովում, և մտաւ Չաքէոս մաքսաւորի տունը:

§ 58, Երուսաղէմ մտնելը հանդիսով:

Յիսուս մարգարէից դուշակութիւնքը կատարելու համար նստեցաւ իշի վերայ,

և Արուստղէմ մտնելու ժամանակ դղարեցաւ բոլոր քաղաքը, և բազմութիւնը զընաց նորա առաջ՝ աղաղակելով, « Ովսաննա Վաւթի որդուն, օրհնեալ որ դալիս ես Աստուծու անունով, Ովսաննա ի բարձունս, . ոմանք իրանց շրերը փռում էին և ոմանք ծառի ճիւղերը կտրատում էին և մատուցանում էին նրան. յետոյ մտնելով տաճարը՝ դուրս արաւ բոլոր առուտուր անողներուն, և այն երեկոյն զընաց Բեթանիա:

§ 59, Խորհրդական ընկերի:

Բաղարջակերաց տօնի առաջին օրը Յիսուս իւր աշակերտներու հետ զնաց մէկ վերնատուն, ուր պատրաստած էր Չատիկը. երբ որ նստեցան սեղան՝ սկսաւ մտիթարել և քարոզել նոցա, պատմել ամենայն անցքը, որ պիտի կրէր այն օրերումը. յայտնեց, որ Յուդան է մատնիչը,

լուաց ամենքի ոտները, տալով հեզութեան և սերի օրինակ. և իւր ապագայ յիշատակի համար առաւ հաց՝ օրհնեց, կոտորեց և տուաւ աշակերտներուն ասելով. « Առէք, կերէք, այս է իմ մարմինը, . ապա առաւ զինուր բաժակը՝ ասաց. « Արբէք (խմեցէք) սրանից, այս է իմ արիւնը նոր ուխտի. և այս արէք իմ յիշատակի համար, . Ընթրիքը աւարտելուց յետոյ զնացին Չիթենեաց սարը:

§ 60, Մարմնակեր:

Յուդայ՝ որ խոստացել էր քահանայապետներուն մատնել Յիսուսին նոցա ձեռքը երեսուն արծաթով, զիշերուայ մէջ մեծ բազմութեամբ եկաւ Յիսուսի մօտ, երբ նա աղօթում էր Պեթսեմանի պարտիզում, և համբուրեց նրան՝ ասելով. ողջ եր Արդապետ. որովհետեւ մատնութեան նշան համբոյրն էր տուել. և նորա

բռնեցին ու տարան քահանայապետի մօտ, իսկ աշակերտները թողին նրան և փախան, միայն Պետրոս հեռուանց գնում էր ետեւից: Երբոր տարան քահանայապետի մօտ, թէև շնորհաբար սաստիկ էին չար խօսում, բայց ոչինչ չկարացին հաստատել. վերջը հարցրեց քահանայապետը՝ « Գո՞ւ ես Աստուծոյ Որդին, ». Յիսուս պատասխանեց. « Գու ասացիր, թէ ես եմ, ». և յետոյ այս ևս ասաւ, թէ « կը տեսնեն նրբան նստած Աստուծոյ աջ կողմը, ». այս խօսքի վերայ գողացին ամենքը՝ թէ մահապարտ է, ու սկսան նախատել և ծեծել նրան:

### § 61, Պիղատոսի լէիւր:

Առաւօտը տարան Յիսուսին Պիղատոսի մօտ, և սկսան չարախօսել. թէպէտ Պիղատոս իմացաւ նորա անմեղութիւնը և կամենում էր արձակել, բայց ժողովուր-

դը զրգուռած քահանայապետներից և կարդացողներից՝ ազաղակեց՝ « Խաչ հանի՛ր դրան, ապա թէ ոչ՝ ոտքի կը կանգնեցնէ ժողովուրդին բոլոր շնորհաստանի մէջ, սկսած Գալիլեայից մինչև այս տեղ, »: Պիղատոս լսելով թէ Յիսուս Գալիլեացի է՝ շերտովէսի իշխանութենից, ուղարկեց նրան շերտովէսի մօտ. թէպէտ սա ուրախացաւ նրան տեսնելով, բայց Յիսուս լռել էր և ոչինչ չխօսեցաւ. այն ժամանակ և շերտովէս անարգեց և յետ ուղարկեց Պիղատոսի մօտ: Սա տեսնելով թէ ոչինչ չէ կարողացել օգնել, այլ աւելի խռովութիւն է ընկնում ժողովուրդեան մէջ, առաւ ջուր, լուաց ձեռները, ասելով. « այդ արգար մարդու արիւնից ես ազատ եմ, ». և նոքա ազաղակեցին. « Գորա արիւնը մեր վերայ և մեր որդւոց վերայ, »: Այս Պիղատոս հրամայեց խաչել:

## § 62, Խաղել-ի-ն:

Այն ժամանակ Հրէայք պատեցին Յիսուսի չորս կողմը, որը ապտակումէին, որք մէջքին ու գլխին էր խփում, որը հայհոյում էր. ապա տկոյրացրին, և նորա շորերը բաժանեցին իւրեանց մէջ, և նրան հագցրին կարմիր շոր, և փշէ պսակ գրին գլխին, ու տարան Գողգոթայ և խաչեցին, և երկու աւաղակներ էլ աջ ու ձախ: Աջակողմեան աւաղակը խոստովանեց իւր մեղքը և ստացաւ արքայութիւնը:

Յիսուս խաչի վերայ աղօթում էր խաչողներու վերայ, մխիթարում էր իւր մօրը, տալով իւր փոխանակ նրան որդի սիրելի աշակերտ Յովհաննէսը: Յիսուս ջուր ուղեց, և տուին քացախ ու լեղի: Օրուայ վեց (12) ժամից մութը բռնեց երկիրը մինչև ինն (3) ժամը, արեգակը խաւարեցաւ: Յիսուս տեսնելով թէ ամենայն բան կատարուած է, աղաղակեց բարձր ձայ-

նով՝ « Հայր, քո ձեռքդ եմ աւանդում հողիս, և աւանդեց. այդ ժամանակ շարժուեցաւ երկիրը, ճաքճաքուեցան քարերը, տաճարի վարագոյրը մէջ տեղը պատուեցաւ, գերեզմաններ բացուեցան, և շատ սուրբերու մարմիններ յարութիւն առան, ու մտան սուրբ քաղաքը և շատերուն երևեցին: Բայց զնսուորներից մէկը Գեղարդով ծակեց կողքը, և շուտով դուրս եկաւ արիւն և ջուր նորա կենդանութեան նշան:

## § 63, Խաղել-ն:

Յովսէփ Արեմաթացի այդ պարկեշտ և նախարար, որ Յիսուսի ծածուկ աշակերտն էր, Պիղատոսի թոյլատրութեամբ իջեցրեց Յիսուսի մարմինը խաչեց, ու պատեց մաքուր կտաւով և դրաւ քարէ գերեզմանի մէջ: Հրէայք՝ որ լսել էին Յիսուսից յարութիւնը, շատ վախեցան, և

կասկածելով թէ չլինի՞ որ աշակերաները  
զողանան մարմինը, և ասին թէ յարու-  
թիւն առաւ, խնդրեցին Պիլատոսից զին-  
ւորներ գերեզմանին զգուշանալու համար  
և կնքեցին գերեզմանաքարը:

### § 64, Յարութիւն:

Երրորդ օրը Յիսուս յարութիւն ա-  
ռաւ գերեզմանից, պահապանները վախե-  
նալով հրեշտակներու երևալուց՝ ընկան  
գետնի վերայ ինչպէս մեռածներ: Եւ շա-  
բաթ երեկոյին մի քանի բարեպաշտ կա-  
նայք եկան գերեզմանը, որ իւղով և խըն-  
կով օծեն Վրիստոսի մարմինը, բայց զը-  
տան դատարկ, և հրեշտակը աւետիս ար-  
ւաւ, թէ՛ այս ատել չէ, յարեաւ, : Եւ  
քա պատմեցին Առաքեալներուն, և ինքն  
յարուցեալն Յիսուս երևեցաւ տասնումէկ  
աշակերաններուն Պաւլոսի սարի վերայ,  
ու պատուիրեց զնալ և քարոզել հեթա-

նոսներուն, մկրտել նրանցը յանուն Հօր,  
և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, խոստանա-  
լով նոցա լինիլ նրանց հետ մինչև աշխար-  
հի վերջը:

### § 65, Համբարշտութիւն:

Յարութեան քառասուն օրից յետոյ  
Յիսուս ժողովեց աշակերաններուն հեթա-  
նիայի մօտ Չիթենեաց սարի վերայ, օրհ-  
նեց նրանցը և խոստացաւ ուղարկել Հո-  
գին սուրբ, որ ուսուցանէ և յիշեցնէ այն  
ամենայն բաները, ինչ որ ինքը խօսել էր  
նոցա հետ, և սպա համբարձաւ երկինքը,  
ու նստաւ Հօր Աստուծոյ աջ կողմը:

§ 66, Հոգւոյն Սրբոյ Հալոսարը և Իրե-  
սոնէս-Բեան Կարածութիւնը Երեսուցեմ:

Վրիստոսի խոստմունքը կատարուեցաւ  
Հոգւոյն Սրբոյ իջնելով վերնատան մէջ

Մուսուլմաններու և միւս միաբան հաւատացեալներու վերայ, որք էին 120 հոգի: Սորա ամենքը լցուեցան շնորհքով զանազան լեզուներ խօսելու և հրաշքներ գործելու: Սորա էին քրիստոնէութեան առաջին տարածողները: Վրիստոսի Եկեղեցին նախապէս հիմնեցաւ Երուսաղէմում, ապա շրջապատանի քաղաքներում և զեղերում, և յետոյ հեթանոսներու աշխարհներում: Պետրոս առաջին քարոզութեամբ շողեալստեան օրը դարձրեց զէպի Վրիստոս 3000 հոգի, և յետոյ Յովհաննէսի հետ բժշկելով մօրից ծնած կաղը՝ միւս քարոզութեամբ դարձրեց 5000 հոգի:

§ 67, Եկեղեցին Պաղեստինայում և Սերիայում:

Սուրբ Ստեփանոսի նահատակութենից յետոյ անհաւատ շրջայքը հալածանք

վերկացրին Մուսուլմաններու և միւս հաւատացեալներու վերայ Երուսաղէմում. այն ժամանակ հաւատացեալներուց շատերը ցրուեցան շրջապատանի և Սիրիայի կողմերը, որոց տարածեցին քրիստոնէութիւնը: Փիլիպպոս սարկաւազ մկրտեց Սամարացիքը, իսկ Երուսաղէմայեկեղեցին ուղարկեց այն տեղ Պետրոսին և Յովհաննէսին, որք աղօթք անելով և ձեռք դնելով նոցա վերայ՝ ստացան շողոյն Սրբոյ շնորհքը: Նոյնպէս և ուրիշները հաստատեցին եկեղեցի Ղազմասկոսում:

§ 68, Պօղոսի դարձը:

Ղազմասկոսի Եկեղեցին բազմացաւ Պօղոսի դարձով. նա էր երիտասարդ Փարիսեցի, սաստիկ պաշտպան Մովսիսական օրէնքներին, և հալածող Վրիստոսի եկեղեցուն: Ղանարով Ղազմասկոս քաղաքը քրիստոնէութիւնը ջնջելու համար, յան-

կարճ ճանապարհին փայլատակեց երկնքից նորա վերայ այնպիսի անսովոր լոյս, որ ընկաւ գետնի վերայ ու կուրացաւ, և լսեց ահաւոր ձայն « Սաւուղ, Սաւուղ, ընչո՞ւ ես հալածում զին, » և կրկին լսեց ձայն « Ես եմ Յիսուս, որ զու հալածում ես, »: Յետոյ Տիրոջ հրամանով կանգնեցաւ, ու նորա հետ եղած մարդիքը տարան նրան Դամասկոս, ուր մկրտուելով Կնանիա առաքեալից (37 թ)՝ բացուեցան աչքերը: Դառնալով այսպիսի հրաշքով քրիստոնեայ, եղև յոյժ եռանդոտ քարոզիչ Եւետարանի, մանաւանդ հեթանոսներու մէջ:

§ 69. Եկեղեցիի Պետարխայոսմ:

Պետրոս առաքեալ լինելով Յուդայե քաղաքում, առանձին աղօթելու ժամանակ եղև նրան աստուածային յայտնութիւն հեթանոսները կանչելու համար

զէպ ի քրիստոնէական հաւատը՝ երկնքից կախուած կտաւէ զամբիւղի օրինակով, որ լեքն էր զանազան գազաններով, անասուններով և թռչուններով, և երկնային ձայնը հրամայեց Պետրոսին մորթել և ուտել:

Հազիւ թէ աւարտուեցաւ տեսիլքը, երբ Եռաքեալը տեսաւ իւր մօտ երեք մարդիք ուղարկուած Հռոմայեցի հարկւրապետ Պուռնելիոսից, որ էր աստուածափախ և բարեգործ մարդ, որ նա հրեշտակի խօսքով խնդրեց Պետրոսից զալ Պետարիա, որպէս զե լսէ նորամէն հոգու փրկութեան բան: Հոգին Սուրբ հրամայեց նրան զնալ աներկիւղ, և երբոր Պետրոս սկսաւ քարոզել Պուռնելիոսին և նորա հետ եղածներուն Քրիստոսի անօրէնութիւնքը և փրկութիւն հաւատով Յիսուս Քրիստոսի վերայ, ամենքն էլ լցուեցան հոգւով Սրբով, և ասպա մկրտեց:

§ 70, Եկեղեցին Անտիոքում:  
 Երուսաղէմի Եկեղեցին ընց, թէ Ստեփանոսի նահատակութենից յետոյ ոմանք հաւատացեալներ հալածանքից ցրուած հիմնել են եկեղեցի և Անտիոքում, ուստի ուղարկեց Բառնաբասն, որ աւելցրեց այն աեղ հաւատացեալներու թիւք, և յետոյ Պօղոսի հետ ի միասին մկ տարի աշխատեցին կարգաւորել այս եկեղեցին (39թ), և Անտիոքում ամենքից առաջ ընկալան շրիստոնէայ անունը:

§ 71, Պօղոս արտաբնայի հասարակութեան ղեկավարը:

Անտիոքում եկեղեցին հաստատելուց և բարեկարգելուց յետոյ՝ Պօղոս սկսաւ երեք ճանապարհորդութիւն անել քրիստոնէութիւնը տարածելու համար: Առաջին ճանապարհորդութիւնը արաւ Բառ-

նարասի հետ (45 և 46 թ), և հաստատեցին եկեղեցիք Ախարոսի և փոքր Ասիայի նահանգների մէջ: Երկրորդ ճանապարհորդութեան ժամանակ բաժանուեցաւ նորամէն Բառնաբաս, և Պօղոս նախ այցելութիւն անելով իւր հիմնած եկեղեցեաց, կրկին հիմնեց եկեղեցիք Մակեդոնիայում և Յունաստանում: Երրորդ ճանապարհորդութեան ժամանակ՝ քարոզելով Եփեսոսում երկու տարի աւելի, տարածեց Աւետարանը Ասիայի բոլոր թեան մէջ, և յետոյ այցելութիւն անելով եկեղեցեաց՝ զնաց Երուսաղէմ (66 կամ 68 թ.), և հազիւ թէ ազատուեցաւ անհաւատ շրեկից սպանուելուց: Չօմմայեցուց հազարապետը ազատելով նրան մահից՝ ուղարկեց որպէս Չօմմայ քաղաքացի Աեսարիա Փելեքս ղատաւորի մօտ: Այս աեղ երկու տարի շղթաներով կապած մնաց բանտի մէջ, և յետոյ Փելեքսին յաջորդ Փեստոս ղատաւորի առջև,

Ազրիպպա թագաւորի ներկայութեան,  
բողոքեց առ կայսր: Այս պատճառաւ ու-  
ղարկեցին նրան պահապաններով Հռոմ,  
ուր գաւառ շատ քրիստոնեայք, և երկու  
տարի քարոզում էր տան մէջ, և կայսեր  
տանից մի քանիսին դարձրեց: Պօղոս կոչ-  
ւում է Առաքելալ հելանոսաց:

§ 72, Միւս առաքելաց հիմնած Եկեղեցիք:

Միւս Առաքելալք և եօթանասուն ա-  
շակերտները ճանապարհորդութիւն արին  
զանազան կողմեր քարոզելու Աւետարանը:  
Պետրոս քարոզեց Հրէաստանի, Ղազար-  
սիայի, Պոնտոսի, Փոիւզիայի, Ապպազով-  
կիայի, Պարսկաստանի և Ասորեստանի  
կողմերում: Թագէնոս Հիմնեց եկեղեցիք  
Եդեսիայում և Հայաստանում: Մար-  
կոս՝ Աղէքսանդրիայում: Թոմաս քարո-  
զեց Պարթևաց, Մարաց, Պարսից և  
Հնդկաստանում: Անդրէաս՝ Սիւրբա-

յւոց: Բարդուղիմէոս՝ Հայաստանում:  
Մարիամ Մագդաղենացի՝ Հռոմում:  
Այսպէս և միւսները տարածեցին ամենայն  
տեղ քրիստոնէութիւնը, հաստատելով  
իրանց քարոզութիւնքը արիւնով և չար-  
չարանքով:

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ  
ԱՌԱՔԵԼԱՎԱՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ:

§ 73, Ղահանայապետութիւն Եկեղեցոց:

Եկեղեցու քահանայապետութիւնը Ա-  
ռաքելայներու ժամանակ բաժանում էր  
երեք աստիճան, Եպիսկոպոսութիւն, Ժահո-  
նայութիւն և սարկաւազութիւն:

Եպիսկոպոսի իշխանութիւնն էր, ինչ-  
պէս է և այժմ, ձեռնադրել և կարգել  
քահանայք և սարկաւազներ, խրատել,  
խրախուսել և դատել, և իշխանութիւն  
իւր վեճակը կառավարելու:

Քահանայի պաշտօնն էր, ինչ որ այժմբն է, քարոզել ժողովրդեան և կատարել սուրբ խորհուրդները:

Սարկաւազի պաշտօնն էր, առաջ հոգալ աղքատներու պիտոյքը, և յետոյ ծառայել սուրբ խորհուրդը կատարելու ժամանակ:

#### § 74, Սուրբ Խորհուրդներ:

Սիրարտի-Յի-նն էր առաջին ճանապարհը մաներու Քրիստոսի եկեղեցու մէջ. Առաքելական դարում նախ՝ ուսուցանում էին հաւատը մկրտութիւն խնդրողին, և կատարում էր երեք անգամ ընկզմելով երեխայն ջրի մէջ, տալով ամենասուրբ Արրորդութեան անունը, և հագնում էր սպիտակ հանգեր ճարտար-Յեան նշան:

Երրորդ խորհուրդը տալիս էին Առաքեալք նոյն ժամին մկրտութենից յետոյ, և կատարում էր ձեռք զնելով: Բայց որովհետև եկեղեցին տարածուելով ամեն

տեղ, դժուար էր Առաքեալներուն գտանուել ամեն տեղ, ուստի սահմանեցին մեռոնը, զոր օրհնեցին Առաքեալք և ուղարկեցին ամենայն տեղ, ինչպէս զրում է Ղիոնեսիոս Արիսպագացին, որ նորամով կատարուի զրոշմի խորհուրդը:

Ապարտի-Յի-ն: Այս խորհուրդը կատարում էր 1, սուրբ Ղիորքը կարդալով, 2, հոգե ու երգերով, 3, քարոզութիւնով, 4, աղօթքով, 5, հաց և զինին, որ բերում էին ժողովուրդը սրբազործելու համար, 6, նուէրքի սրբազործելը էական բանով, 7, նորա բաժանելը ներկայ գտանուողներուն, և 8, սորանից յետոյ լինում էր սեղան, որ կոչում էր ապարտ, այսինքն սիրոյ հաց:

Ապարտարտի-Յեան խորհուրդը կատարում էր հրապարակական խոստովանութեամբ: Նորա արտաքին նշաններն էին՝ ծնրադրութիւն, զեանի վերայ փռուել, արտասուք, պահք, աղօթք:

Պատիճ համար պահանջուով էր փեսայի  
և հարսի փոխադարձ համաձայնութիւնը,  
և ապա եկեղեցու ներկայութեանը օրհ-  
նում էր նոցա պատկը եպիսկոպոսը կամ  
քահանայն:

Քահանայութեան կոչման համար շատ  
սաստիկ էին քննում քահանայացուի հա-  
ւատը, գիտութիւնը և վարքը. նրան ընտ-  
րում էր ժողովուրդը, և առաքելները  
կամ եպիսկոպոսները պահքով և ազօթ-  
քով և ձեռք դնելով կատարում էին կարգը.  
յետոյ մտաւ մեռնի գործածութիւնը,  
զոր առաքելները սահմանեցին, ինչպէս  
գրում է Ղիոնէսիոս Արիսպագացին:

Սէրճեմ օժոճեմ կատարւում էր երբեմն  
իւզով, երբեմն աղօթքով, երբեմն միասին  
իւզով ու աղօթքով հիւանդի վերայ:

§ 75, Աստուածաբանական:

Հասարակաց Աստուածաբանութիւնը  
սկսվում էր Տէրունական աղօթքով, կար-

գում էին հին ու նոր Աստուածանից մի-  
քանի պրոֆաներ, և յետոյ եպիսկոպոսը  
կամ քահանայն մեկնում էր ժողովրդին  
կարգացածը. լինում էր երգեր, և վեր-  
ջանում էր Հաղորդութեան խորհրդի  
կատարելով:

Աստուածաբանութեան տեղերն էին,  
1, Երուսաղէմայ տաճարը, 2, Սերնա-  
տանը՝ ուր Հոգին Սուրբ իջաւ, 3, առան-  
ձին տներ պատրաստուած յատկապէս սո-  
րա համար:

§ 76, Պահ:

Առաքելական Եկեղեցին միշտ պահում  
էր քառասնորդական պահքը Չատկից  
առաջ, նոյնպէս Չորեքշաբթի և Ուր-  
բաթ, ինչպէս երևում է առաքելական  
կանոններից, որի վերայ խօսում են հաս-  
տատութեանը 2 և 3 դարու սուրբ Հայ-  
րերը: Բացի սահմանեալ պահքից առա-

ջին քրիստոնեայք պահում էին երբոր երևելի գործ պիտի սկսին, ինչպէս ձեռնադրութեան խորհուրդը կատարելուց առաջ, և ըն:

§ 77, Տօնակարարութիւնք:

Առաքելական եկեղեցին ունէր տօներ, 1, Վրիստոյ յարութեան օրը, այն է Միւրակէն, որ բռնեց շրէից շաբաթ առուր տեղը, 2, նոր ուրախ Օգոստիկը, Վրիստոսի չարչարանքի և յարութեան յիշատակ, 3, Նոգեղալուսարը, 4, Ծննդեան և մկրտութեան տօնը, և 5, բաց ի սորանցից՝ տօնում էր հանդիսով և մարտիրոսներու վախճանուելու օրերը:

§ 78, Թաղութի Ժեար:

Շրէայք և հեթանոսները ունէին իւրեանց թաղումի առանձին ծէսեր, և միա-

տեսակ կատարելու համար առաջին Ակեղեցին սահմանեց կատարել հանդիսաւոր կարգ աղօթքով և պատարագով: Մեռելը լեղացնում էին ջրով, պատանում էին ըսպիտակ կտաւով, երեսը դարձնում էին դէպ ի արևելք, թաղում էին մարտիրոսներու գերեզմանների մօտ: Անջեցեալե հանգստեան պաշտօնը սկսում էր արևի մայր մտնելուց յետոյ և շարունակուում էր ողջ զիշերը երգերով, ընթերցուածներով և աղօթքով, և վերջանում էր պատարագով, և հացկերութով: Միւս օրը կանայք գնում էին գերեզմանը, զոր կոչում ենք այգ: Շրէական եօթն օր սզի փոխանակ սահմանեցաւ եօթն օր պատարագ. նոյնպէս երեսուն օր արամութեան և հեթանոսներու, որպէս Ազիպտացուց, եօթանասուն առուր սզի փոխանակ՝ սահմանեցաւ քառասուն օր պատարագ ամբիճներով, և տարեկեց, որ այժմ Թիֆլիզում կոչուում են «Եղան»:





Հայաստանի Ազգային գրադարան



NL0429878



